ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

unicef

70 YEARS FOR EVERY CHILD



# ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## Բազմակի և համընկնող խոցելիության ազգային վերլուծություն

2016

© ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի
հայաստանյան գրասենյակ
ISBN 978-9939-1-0442-3

Շապիկի նկարը: Աղջիկը ցույց է տալիս
թվեր Երևանի ներառական դպրոցներից
մեկում, դասի ժամանակ
© ՅՈՒՆԻՍԵՖ/Հայաստան2016/Պիրոզզի

Արտահայտված տեսակետները
պատկանում են հեղինակներին և
պարտադիր չէ, որ արտահայտեն ՄԱԿ-ի
մանկական հիմնադրամի տեսակետները և
քաղաքականությունը:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

unicef
70 YEARS FOR EVERY CHILD

# ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## Բազմակի և համընկնող խոցելիության ազգային վերլուծություն

2016

Լյուչիա Ֆեռոնե (Lucia Ferrone) – Եկատերինա Չժեն (Yekaterina Chzhen)
ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետազոտությունների գրասենյակ

# ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Հեղինակները շնորհակալություն են հայտնում 2015 և 2016թթ. ք. Երևանում անցկացված երկու աշխատաժողովների մասնակիցներին՝ շահագրգիռ կողմերին, խորհրդակցական գործընթացի արդյունքում խոցելիության չափումների և ցուցանիշների ընտրության հարցում ցուցաբերած օգնության, ինչպես նաև առանցքային արդյուքների վերաբերյալ մեկնաբանությունների համար: Շնորհակալություն Լուսինե Երեմյանին՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի Մոնիթորինգի և գնահատման/Երեխաների իրավունքների համակարգերի մոնիթորինգի բաժնի ղեկավար, Արփինե Մաժինյանին՝ Վիճակագրության և մոնիթորինգի ու գնահատման օգնական, ինչպես նաև ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործընկերներին հետազոտության բոլոր փուլերին աջակցելու և զեկույցի վերանայման համար: Հատուկ շնորհակալություն Դիանա Մարտիրոսովային, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի նախկին պետ, և ՀՀ ԱՎԾ նրա գործընկերներին՝ հետազոտության տվյալներն օգտագործելու հնարավորություն ընձեռելու և արդյունքների վերաբերյալ կառուցողական արձագանքի համար: Զեկույցում արտահայտված տեսակետների ու բացահայտումների համար պատասխանատու են միայն հեղինակները:

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| ԱՀԿ | Առողջապահության համաշխարհային կազմակերպություն |
| ԲՀԽՎ | Բազմակի և համընկնող խոցելիության վերլուծություն |
| ԵԻՀ | Երեխաների իրավունքների մասին հռչակագիր |
| ԵՄ - ԵԿՊՎ | ԵՄ- Եկամուտների և կենսապայմանների վիճակագրություն |
| ԺԱՀ | Ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտություն |
| ՀՀԴ | ՀՀ դրամ |
| ԿԱԵ/ԱՊՀ | Կենտրոնական և Արևելյան Եվրոպա/Անկախ պետությունների համագործակցություն |
| ԿԶՆ | Կայուն զարգացման նպատակներ |
| ՀՀ ԱՎԾ | Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն |
| ՀՆԱ | Համախառն ներքին արդյունք |
| ՃԸԹՀ | Ճշգրտված ընդհանուր թվաքանակի հարաբերակցություն |
| ՄԶԻ | Մարդկային զարգացման ինդեքս |
| ՄԵԵ | Միջին եկամուտ ունեցող երկիր |
| ՎՄԿԽ | Վաղ մանկության կրթություն և խնամք |
| ՏՏԸԲՈՒ | Տնային տնտեսության ընդլայնված բյուջեի ուսումնասիրություն |
| ՏՏԿԱՀ | Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն |
| ՏԽԽ | Տեխնիկական խորհրդատվական խորհուրդ |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ ... 6

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ... 10

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ... 12

3. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԴՐԱՄԱԿԱՆ և ԲԱԶՄԱՉԱՓ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ... 18

4. 0-5 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐ ... 32

5. 6  14 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐ ... 44

6. 15-17 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐ ... 54

7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ... 62

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ... 63

ՀՂՈՒՄՆԵՐ ... 64

ՀԱՎԵԼՎԱԾ Ա.
Աղքատության դրսևորումների և ցուցանիշների ցանկ ... 65

ՀԱՎԵԼՎԱԾ Բ.
Մեթոդաբանություն ... 66

ՀԱՎԵԼՎԱԾ Գ.
Բազմաչափ ռեգրեսիայի արդյունքներ ... 67



Մանկական աղքատությունն ավելին է, քան պարզապես դրամական կարիքը. այն բազաթիվ այլ դրսևորումներ ունի: Աղքատության պայմաններում ապրող երեխաները զրկված են բազմաթիվ բաներից, որոնց առկայությունը շատերս բնական ենք համարում: Երեխաների համար աղքատ լինել նշանակում է զրկված լինել իրենց համար կարևորագույն կենսապայմաններից, մասնավորապես՝ սննդից, կրթությունից, հանգստից կամ բնակարանային պայմաններից: Նման խոցելիությունը կարող է ավելի հեռուն գնացող հետևանքներ ունենալ, քան պարզապես դրամական աղքատությունը: Այն կարող է ազդել ոչ միայն երեխայի ներկա կյանքի որակի, այլև՝ հետագայում իր ներուժը զարգացնելու երեխայի կարողության վրա:

Աղքատության կրճատումը ինքնին բարդ գործընթաց է, բայց այն սկսվում է որակյալ տվյալներից և տեղեկատվության վրա հիմնված քաղաքականությունից: Ազգային բազմակի և համընկնող խոցելիության վերլուծությունը (N-MODA) Հայաստանի առաջին փորձն է դիտարկելու մանկական աղքատությունը ոչ դրամային տեսանկյունից և գնահատելու, թե ինչպես աղքատության երկու չափումները՝ բազմաչափ և դրամային, կարող են օգտագործվել միասնականորեն՝ դրվելով յուրաքանչյուր երեխայի աղքատության նվազեցման ամբողջական մոտեցման հիմքում: Այս վերլուծությունը եզակի հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչ տարբեր ձևերով է աղքատությունը ազդում երեխաների և դեռահասների վրա: Այն նաև Կայուն զարգացման նպատակների շրջանակներում երեխաների աղքատության մշտադիտարկումը իրականացնելու գործիք է:

Այս վերլուծությունը կարևոր նշանակություն ունի նաև քաղաքականության մշակման համար: Մեր միասնական ջանքերը պետք է ուղղված լինեն ոչ միայն երեխաների սոցիալական պաշտպանության բարելավմանը, ռիսկերից նրանց զերծ պահելուն, այլև երեխաներին անհրաժեշտ ծառայությունների հասանելիության ապահովմանը: Հուսով եմ, որ այս հաշվետվությունը շատերին կոգևորի և մեզ միանալու շարժառիթ կդառնա՝ Հայաստանում մանկական աղքատությունը վերացնելու ուղղությամբ միասնական քայլեր կատարելու համար:

**Տանյա Ռադոչայ**
**ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ**



ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 2015թ. սեպտեմբերին 25-ին ընդունված «Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030» խորագրով փաստաթղթում ներկայացված Կայուն Զարգացման առաջին նպատակի թիրախներից մեկն է մինչև 2030 թ. առնվազն կիսով չափ կրճատել ըստ ազգային սահմանումների բազմաչափ աղքատության մեջ ապրող բոլոր տարիքների տղամարդկանց, կանանց և երեխաների համամասնությունը:

Մանկական աղքատությունն իր դրսևորումներով զգալիորեն տարբերվում է մեծահասակների աղքատությունից: Երեխաների դեպքում աղքատությունն արտահայտվում է մի խումբ զրկանքներով, որոնք բացասական ազդեցություն են ունենում երեխայի ֆիզիկական, մտավոր, զգայական և հոգեկան զարգացման վրա: Հետևաբար, մանկական աղքատությանը միայն սպառման տեսանկյունից գնահատելը բավարար չէ: Հիշատակվածը դրդում է հետազոտողներին անցնել աղքատության չափման ավանդական հայեցակարգերից և մեթոդներից անդին՝ բացահայտելու աղքատության բազմաչափ «դեմքը»:

Սույն զեկույցը հնարավորություն կընձեռի բացահայտելու Հայաստանում մանկական աղքատության առանձնահատկությունները ազգային բազմակի և համընկնող խոցելիության վերլուծության միջոցով՝ գործիք, որը հնարավորություն է տալիս կատարել արժեքավոր բացահայտումներ այնպիսի բարդ խնդրի շուրջ, ինչպիսին մանկական բազմաչափ աղքատությունն է: Զեկույցն իր տեսակի մեջ առաջինն է, որն ազգային մակարդակով պատկերում է Հայաստանում մանկական բազմաչափ աղքատության իրավիճակը՝ ներառյալ դրա համընկնումը դրամական աղքատության հետ:

Հուսով եմ, որ հետազոտության արդյունքները կօգտագործվեն որոշում ընդունող ատյանների, հետազոտողների, գիտակրթական և հասարակական կազմակերպությունների և ընդհանրապես՝ հանրության շահագրգիռ և լայն շրջանակների կողմից:

**Ստեփան Մնացականյան**
**ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ**

# ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ

**Սույն զեկույցը տալիս է Հայաստանում մանկական բազմաչափ աղքատության առաջին համապարփակ գնահատականը, որը** ստացվել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետազոտությունների գրասենյակի կողմից մշակված Բազմակի և համընկնող խոցելիության[1] վերլուծության (MODA) մեթոդաբանության հիման վրա: Բացի այդ, սույն զեկույցը վերլուծում է բազմաչափ աղքատությունը դրամական աղքատության հետ համատեղ՝ գնատահելով այդ երկուսի համընկնման աստիճանը, ինչպես նաև ներկայացնելով ազգային համատեքստում մանկական աղքատության համապարփակ պատկերը: Այս հետազոտության շրջանակներում աղքատության չափելի դրսևորումները[2] ու ցուցանիշներն ընտրվել են հիմնական շահագրգիռ կողմերի հետ լայն խորհրդատվական գործընթացի արդյունքում, որն իրականացվել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի նախաձեռնությամբ: Աղքատության չափելի դրսևորումների և ցուցանիշների ամբողջական ցուցակը՝ սահմանումներով կարող եք գտնել Հավելված Ա-ում:

**Բազմաչափ աղքատությունը և վերջինիս մոնիթորինգը Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) մասն են կազմում:** 2015թ. հաջորդող Զարգացման օրակարգի շրջանակներում՝ սահմանված Կայուն զարգացման նպատակներից է թիվ 1.2 Նպատակը, որը հստակորեն սահմանում է.

*«Մինչև 2030թ.-ը առնվազն կիսով չափ կրճատել ըստ ազգային սահմանումների բազմաչափ աղքատության մեջ ապրող բոլոր տարիքների տղամարդկանց, կանանց և երեխաների համամասնությունը»:*

Հետևաբար, մանկական բազմաչափ աղքատության ազգային ցուցանիշների սահմանումն անհրաժեշտ գործիք է հանդիսանում ԿԶՆ-ին ուղղված առաջընթացը վերահսկելու համար:

**Հայաստանում երեխաների 64 տոկոսը խոցելի է[3] աղքատության 2 և ավելի չափելի դրսևորման ուղղությամբ:** Ըստ առկա տվյալների նման խոցելիությունը հասնում է 82 տոկոսի գյուղական բնակավայրերում, մինչդեռ քաղաքային բնակավայրերում այն կազմում է 53 տոկոս: Ազգային մակարդակում երեխաների միայն 12 տոկոսն է, որ չի կրում աղքատության տարբեր դրսևորումների ազդեցությունը: Սա վերաբերում է գյուղական բնակավայրերում ապրող երեխաների միայն 3 տոկոսին, մինչդեռ քաղաքային բնակավայրերում երեխաների 18 տոկոսն է, որ չի կրում աղքատության տարբեր դրսևորումների ազդեցությունը: Նման երեխաները միաժամանակ խոցելի են աղքատության միջինում 3 չափման ուղղությամբ:

**Երեխաների մեծ մասը խոցելի է կոմունալ ծառայությունների, բնակարանային պայմանների և ժամանցային հնարավորությունների տեսանկյունից:** Կոմունալ ծառայություններն այստեղ սահմանվում են որպես վատ ջրամատակարարման և ջեռուցման համակցություն, իսկ բնակարանային պայմանները՝որպես բնակելի տարածքի գերբնակեցում և բնակարանային խնդիրների առկայություն: Ժամանցը չափվում է ժամանցի պարագաների և խաղալու տարածքի համակցությամբ: Կոմունալ ծառայությունների առումով տարբերությունը շատ սուր է գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև. գյուղական բնակավայրերում երեխաների 87

---

[1]Խոցելիություն եզրույթն այս զեկույցում օգտագործվել է անգլերեն deprivation-ի թարգմանության համար: Այս համատեքստում խոցելիությունը/դեպրիվացիան սահմանվում է որպես այն ամենի բացակայություն կամ անբավարարություն, ինչ անհրաժեշտ է երեխայի բարեկեցության և զարգացման համար: Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է մատնացույց անել, թե խոցելիության քանի նման ազդեցությունների է ենթակա երեխան, օգտագործվում է նաև զրկանք բառը: Այս համատեքստում այն նշանակում է ինչ-որ բանից զրկված լինել:

[2]Այս եզրույթով թարգմանվում է անգլերեն dimension բառը, որը սովորաբար հայերեն թարգմանվում է որպես հարթություն, չափ, ծավալ, մեծություն: Այս համատեքստում, սակայն, խոսքը գնում է աղքատության տարբեր դրսևորումների մասին: Երբ խոսքը գնում է գործընթացի մասին, նաև աղքատության չափման/չափումների մասին: Երբեմն զեկույցում օգտագործվում է նաև ուղղություն բառը՝ փոխարինելով աղքատության չափելի դրսևորում կամ չափում կապակցությանը/բառին, հայերենում դրա օգտագործումը հեշտացնելու նպատակով:

[3]Խոցելի լինելը այս զեկույցում կիրառվել է անգլերեն to be deprived-ի թարգմանության համար: Զեկույցում քննարկվող «բազմակի և համընկնող խոցելիության» մեթոդի անվանման մեջ խոցելիություն բառը նույնպես վերաբերվում է անգլերեն deprivation/դեպրիվացիա բառին, որը երբեմն, շատ սահմանափակ դեպքերում, հայերենում կիրառվում է նաև որպես զրկանք, եթե համատեքստը պահանջում է հաշվելի գոյականի կիրառում: Այդուհանդերձ, մեթոդի անվանման հետ համապատասխանության տեսանկյունից, to be deprived-ը հիմնականում թարգմանվում է ոչ թե զրկված լինել, բացառությամբ մի քանի դեպքերի, այլ խոցելի լինել:

տոկոսը զրկված է որոշ ծառայություններից, քանի որ անբավարար է թե՛ ջրամատակարարման և թե՛ ջեռուցման հասանելիությունը: Երկրորդ կարևոր տարբերությունը վերաբերում է տեղեկատվությանը. գյուղական բնակավայրերում ապրող երեխաների 57 տոկոսի համար տեղեկատվությունը հասանելի չէ, մինչդեռ քաղաքային բնակավայրերում ապրող երեխաների միայն մեկ երրորդն է գտնվում նույն իրավիճակում: Ժամանցային զրկանքների բաշխվածության առումով ըստ բնակության տարածքի տարբերություններ չեն արձանագրվել: Միևնույն ժամանակ, զրկանքների բաշխման կամ աղքատության կոնկրետ չափումների առումով չկան նաև սեռային կարևոր տարբերություններ:

**Երեք երեխայից գրեթե մեկը թե՛ աղքատ է, թե՛ խոցելի:** Երեխաների 28 տոկոսը խոցելի է (աղքատության 2 կամ ավելի չափելի դրսևորմամբ) և ապրում է դրամական տեսանկյունից աղքատ տնային տնտեսությունում: Այս երեխաներն ամենախոցելին են և, հետևաբար, առաջնահերթ ուշադրության պետք է արժանանան սոցիալական քաղաքականության տեսանկյունից: Միաժամանակ, երեխաների 36 տոկոսը խոցելի է, սակայն չի ապրում աղքատ տնային տնտեսություններում: Այս երեխաների խոցելիությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է ուղղակի միջամտություն, որպեսզի նրանք դուրս չմնան ուշադրությունից՝ միայն դրամական աղքատության խնդիրները լուծող քաղաքականությունների կիրառման արդյունքում:

**Ավելի ցածր տարիքի երեխաների շրջանում հիմնականում նկատվում է սնունդի գծով խոցելիություն:** 0-5 տարեկան երեխաների գրեթե մեկ երրորդը խոցելի է սննդի առումով, իսկ 3-5 տարեկան երեխաների 23 տոկոսը խոցելի է վաղ մանկական տարիքի կրթության առումով: Տարիքային այս խմբի համար խոցելիության ամենաբարձր ցուցանիշները տեղ են գտել տեղեկատվության (49 տոկոս), կոմունալ ծառայությունների (48 տոկոս) և բնակարանային պայմանների (51 տոկոս) չափումներում:

**Ավելի բարձր տարիքի երեխաները հիմնականում խոցելի են ժամանցի և սոցիալական փոխհարաբերությունների առումով:** 6-14 և 15-17 տարեկան երեխաներն առավել խոցելի են ժամանցի տեսանկյունից, քանի որ չունեն դրսում խաղալու տարածք, գրքեր կամ խաղալիքներ: 6-14 տարեկան երեխաների գրեթե կեսը խոցելի է սոցիալական փոխհարաբերությունների տեսանկյունից: 6-14 տարեկան երեխաների 37 տոկոսը խոցելի է կրթության տեսանկյունից, մինչդեռ ավելի բարձր տարիքի երեխաների 12 տոկոսը ներառված չէ կրթական կամ ուսուցման համակարգերում:





© UNICEF/Armenia2016/Pirozzi

# 1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ երեխաները՝ ավելի քան որևէ այլ տարիքային խումբ, ենթակա են աղքատության ռիսկին: Մանկական աղքատությունը հատկապես վնասակար է, քանի որ այն երեխաների վրա բացասաբար է ազդում ոչ միայն այն ժամանակ, երբ նրանք կրում են դրա ազդեցությունը (Բրուքս-Գանն և Դունկան, 1997թ.), այլ հաճախ ունենում է նաև երկարաժամկետ հետևանքներ (Գրեգ և Մաչին, 2001թ., Կորակ 2006թ., էսպինգ-Անդերսեն և Մայլս, 2009թ.): Մանկական աղքատության մակարդակների մոնիթորինգը և դրա հիմքում ընկած գործոնների վերլուծությունը չափազանց կարևոր է երեխաների կենսապայմանների բարելավմանն ուղղված արդյունավետ քաղաքականությունների մշակման և իրականացման համար: Աղքատության վերլուծության ավանդական մոդելը շեշտը դնում է դրամական բարեկեցության վրա և օգտագործում է եկամտի և ծախսերի ցուցանիշները տնային տնտեսությունների աղքատության կարգավիճակը գնահատելու համար: Սակայն երեխաները, ընդհանուր առմամբ, չեն մասնակցում կենցաղային ծախսերի և սպառման վերաբերյալ որոշումների կայացմանը, իսկ նրանց զրկանքները կարող են տարբերվել տվյալ տնային տնտեսության չափահաս անդամների զրկանքներից (տես՝ դը Նյոբուրգը և այլոք 2014թ.): Ավելին, հայտնի է, որ աղքատությունը բազմաչափ հասկացություն է, որը ներառում է ավելին, քան ուղղակի եկամուտը կամ ապրանքների և ծառայությունների սպառումը:

*«Աղքատության պայմաններում ապրող երեխաները զրկված են սննդից, ջրամատակարարման և սանիտարահիգենիկ պայմաններից, առողջապահական հիմնական ծառայություններից, կացարանից, մասնակցությունից և պաշտպանությունից: Թեպետ ապրանքների և ծառայությունների խիստ պակասը վնասակար է ցանկացած մարդկային էակի համար, այն առավել վտանգավոր և վնասակար է երեխաների համար, քանի որ թույլ չի տալիս երեխաներին վայելել իրենց իրավունքները, օգտագործել իրենց ողջ ներուժը և հասարակության իրենց մասնակցությունը բերել որպես լիիրավ անդամ» (ՄԱԿ, 2007թ.):*

Կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ) վերջերս բացահայտորեն ընդունեցին աղքատության բազմաչափ դրսևորումները չափելու կարևորությունը, ինչպես նաև այն փաստը, որ աղքատությունը բնակչության տարբեր խմբերի վրա կարող է տարբեր ազդեցություն ունենալ: Թիվ 1.2 Նպատակը սահմանում է.

*Մինչև 2030թ.-ը առնվազն կիսով չափ կրճատել ըստ ազգային սահմանումների բազմաչափ աղքատության մեջ ապրող բոլոր տարիքների տղամարդկանց, կանանց և երեխաների համամասնությունը»:*

*Այս նպատակը ուղղակիորեն անդրադառնում է երեխաներին՝ հղում կատարելով աղքատության բոլոր չափելի դրսևորումներին և ընդգծելով աղքատության սահմանման կարևորությունը յուրաքանչյուր երկրի համար: Այս համատեքստում շատ կարևոր է կոնկրետ, ազգային մակարդակում հաստատված, երեխաներին ուղղված բազմաչափ աղքատության ցուցանիշի մշակումը կայուն զարգացման այս կարևորագույն նպատակի ուղղությամբ առաջընթացի վերահսկման համար:*

Ընդունելով աղքատության դրսևորումների բազմաչափ բնույթը՝ վերջին տասնամյակում լուրջ առաջընթաց է գրանցվել աղքատության չափման առումով (տես՝ Ատկինսոն, 2003թ., Բուրգինյոն և Չակրավարտի, 2003թ., Գորդոն և այլոք, 2003թ., Ալկիրի և Ֆոսթեր, 2011թ.). Բազմակի և համընկնող խոցելիության վերլուծությունը (MODA) աղքատության չափման նոր մեթոդաբանություն է, որը ՅՈՒՆԻՍԵՖ-ը մշակել է երեխաների նյութական խոցելիության և դրամական աղքատության ծավալները և բնույթը որոշելու համար (տես՝, դը Նյոբուրգը և այլոք 2012թ.): Երեխաների բարեկեցության դրսևորումները գոյատևման, զարգացման, պաշտպանության և մասնակցության տեսանկյունից չափելու համար հիմքը դրվում է երեխաների իրավունքների միջազգային շրջանակի վրա: Այս մեթոդը ներառում է երեխաների բարեկեցության դրսևորումների այնպիսի չափումներ, որոնք ուղղակիորեն նույնիսկ կապված չեն նյութական ռեսուրսների հետ: Փոխարենը, դրանց վրա ազդում են տեղական ենթակառուցվածքների բացակայությունը (օրինակ՝ ջրամատակարարման և սանիտարահիգենիկ ծառայություններ) կամ ընտանիքի ներսում առկա հարաբերությունները (օրինակ՝ բռնություններից պաշտպանություն): MODA մեթոդաբանության հիմնական հատկանիշներից մեկը տարբեր համատեքստերում վերջինս ադապտացնելու հնարավորությունն է: MODA –ն կիրառվել է մի շարք տարբեր ազգային հետազոտություններում, մասնավորապես ԿԶՆ-երի տեսանկյունից: Հայաստանը

մեկն է միջին եկամուտով այն քիչ երկրներից (ՄԵԵ), որոնք ձեռնարկել են նմանատիպ վերլուծություն: Մյուս երկրներից են Բոսնիա-Հերցոգովինան ԿԱԵ/ԱՊՀ տարածաշրջանում և Բոցվանան Արևելյան և Հարավային Աֆրիկայի տարածաշրջանում /բարձր միջին եկամուտով երկրներ/:

*Այսպիսով, Հայաստանն առաջինն է իր տեսակի երկրներում, որը Մանկական աղքատության ազգային վերլուծության իրականացման համար օգտագործել է MODA մեթոդաբանությունը:*

Սույն հետազոտությունը կիրառում է MODA մեթոդաբանությունը Հայաստանի համար մանկական բազմաչափ աղքատության ցուցանիշ մշակելու համար: Հետազոտության շրջանակներում վերլուծվում է մանկական բազմաչափ խոցելության/կարիքավորության տարածվածությունը և խորությունը, ինչպես նաև դրամական աղքատության և բազմակի խոցելիության համընկնումը՝ այսպիսով տրամադրելով Հայաստանում մանկական աղքատության ամբողջական պատկերը:

Հայաստանը նախկին խորհրդային երկիր է, որը դեպի ծով ելք չունի: Այն գտնվում է Հարավային Կովկասի տարածաշրջանում, որը հյուսիսում սահմանակից է Վրաստանի, հարավում և արևմուտքում՝ Թուրքիայի, արևելքում՝ Ադրբեջանի, իսկ հարավում՝ Իրանի հետ: Հայաստանը պատմականորեն լարված հարաբերություններ ունի Թուրքիայի և Ադրբեջանի հետ: Հարաբերությունները հատկապես սրված են Ադրբեջանի հետ, քանի որ 90-ականների սկզբից ի վեր այս երկու երկիրները շարունակական զինված հակամարտության մեջ են Լեռնային Ղարաբաղի վիճարկված տարածքի կարգավիճակի շուրջ: Երկարատև հրադադարից հետո՝ 2016թ ապրիլին, հակամարտությունը կրկին սրվել է: Աշխարհաքաղաքական անկայուն իրավիճակը, ինչպես նաև իր չորս հարևաններից երկուսի հետ փակ սահմանների առկայությունը բարդ իրավիճակ է ստեղծում Հայաստանում կենսապայմանների բարելավման առումով և խանգարում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Հայաստանը ցածր-միջին եկամտով երկիր է՝ մարդկային զարգացման միջին ինդեքսով/համաթվով (ՄԶԻ): 2001-2007թթ. տնտեսական երկնիշ աճի ժամանակաշրջանից հետո, համաշխարհային ճգնաժամը լուրջ հարված հասցրեց երկրին 2008թ. վերջին եռամսյակում: Արդյունքում, 2009թ. ՀՆԱ-ն կտրուկ նվազեց՝ երկիրը ներքաշելով խորը տնտեսական ռեցեսիայի մեջ: Նույն տարում՝ 1998թ.-ից ի վեր առաջին անգամ աղքատության մակարդակի աճ գրանցվեց: 2010թ.-ից ի վեր տնտեսությունը սկսեց վերականգնվել. մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի գնողունակության ճշգրտված պարիտետը 2011թ. $5,200 –ից աճել է՝ 2013թ.-ին հասնելով $7,526: Հայաստանի ՄԶԻ-ն 2013թ. կազմել է 0.730, որը բավականին բարձր `է մարդկային զարգացման համաթվի տեսանկյունից և արդյունքում 187 երկրների և տարածքների շարքում երկիրը զբաղեցրել է 87-րդ տեղը: 1990 -2013թթ. Հայաստանի ՄԶԻ-ն 0.632-ից աճել է մինչև 0.730[4]:

Այդուհանդերձ, հաշվի առնելով դրամական աղքատությունը, 2015թ. ,Հայաստանի Սոցիալական պատկերը և աղքատությունըե վերլուծության արդյունքների համաձայն (այս զեկույցի էմպիրիկ վերլուծությունների մեծ մասի հիմքում ընկած է 2014թ. Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը) Հայաստանում բնակչության 30 տոկոսն աղքատ է սպառման գծով, իսկ 8 տարեկանից ցածր բնակչության շրջանում աղքատության մակարդակը նույնիսկ ավելի բարձր է՝ կազմելով գրեթե 34 տոկոս[5]: Չնայած վերջին տասնամյակում շարունակական առաջընթացին՝ Հայաստանում երեխաների իրավիճակը դեռևս շարունակում է խնդրահարույց մնալ՝ մասնավորապես հիմնական ծառայությունների հասանելիության առումով:

Այս համատեքստում մանկական աղքատության բազմաչափ ցուցանիշի մշակումը և մանկական աղքատության ամբողջական պատկերի ստացումը հույժ կարևոր են: Աղքատության չափման ստանդարտ դրամական ցուցանիշների հետ մեկտեղ երեխաների վերաբերյալ ոչ-դրամական ցուցանիշների առկայությունը Հայաստանին եզակի հնարավորություն է տալիս գնահատել մանկական աղքատության ամբողջական պատկերը:

[4] ՄԱԿ-ի մանական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, Երեխաների իրավիճակի վերլուծություն 2014

[5]Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015թ., ՀՀ ԱՎԾ

# 2 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունն օգտագործում է 2013թ. և 2014թ. Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների (ՏՏԿԱՀ) տվյալները: Այս հետազոտության շրջանակներում մի շարք թեմաների վերաբերյալ հարցման է ենթարկվում հայաստանյան տնային տնտեսությունների երկրի մակարդակով ներկայացուցչական ընտրանքը և այն համարվում է աղքատության ազգային վիճակագրության պաշտոնական աղբյուրը: Սասնավորապես, 2013թ. հունիսից մինչև 2014թ. հունիս ընկած ժամանակահատվածում, իրականացվել է Յունիսեֆի կողմից պատվիրակված Երեխաների կարիքների գնահատման մոդուլով հարցում (Child Needs module), որն ինչ-որ չափով նման է Եվրոպական միությունում ԵՄ-ԵԿՊԿ հետազոտություններում և 2011թ. Բոսնիա-Հերցոգովինայում իրականացված Տնային տնտեսությունների բյուջեի ընդլայնված հետազոտություններում օգտագործված մոդուլներին (տես Չժեն և Ֆեռնե, 2016):

Երեխաների կարիքների գնահատման մոդուլը ներառում է 6-17 տարեկան երեխաներին միտված մի շարք հարցեր, որոնց վերաբերյալ, սակայն, տեղեկությունները տրամադրում է տվյալ տնային տնտեսությունում հարցմանը մասնակցող չափահաս անձը: Այլ կերպ ասած, երեխաները իրենք չեն լրացնում Երեխաների կարիքների գնահատման մոդուլը:

Սույն հետազոտությունն այս մոդուլը կիրառում է նաև ավելի բարձր տարիքի երեխաների աղքատության դրսևորումների չափման համար: Հետազոտության վերջնական ընտրանքում ներառված են եղել 0-17 տարեկան 5,519 երեխա 3,461տնային տնտեսություններից, որոնք հարցմանը մասնակցել են 2013-2014թթ.: Սա ՏՏԿԱՀ-ի ընդհանուր ընտրանքի ենթաընտրանքն է, որը, սակայն, ազգային մակարդակում ներկայացուցչական է համարվում: Չնայած նրան, որ ՏՏԿԱՀ-ն ավելի ցածր տարիքի երեխաների առողջապահական և սնուցման գծով խոցելիության վերհանման տեսանկյունից այնքան համապարփակ չէ, որքան, ասենք, ԺԱՀ-երը, այն ներառում է բավարար հիմնական տեղեկություններ խոցելիության անհատական ցուցանիշները սահմանելու համար: ՏՏԿԱՀ-ը կարևոր է նաև դրամական

## ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳ:
## ԲԱԶՄԱԿԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ



աղքատության չափման առումով, այնպես, որ բարեկեցության այս երկու դրսևորումները կարող են համեմատվել և վերլուծվել միաժամանակ՝ երեխաների կենսապայմանների վերաբերյալ տրամադրելով ամբողջական պատկեր:

MODA ընդհանուր մեթոդաբանությանը համահունչ՝ աղքատության բոլոր չափելի դրսևորումների ընտրությունը կատարելիս որպես ուղեցուցային սկզբունք օգտագործվել է երեխաների իրավունքների մասին կոնվենցիան (ՄԱԿ, 1989թ.): Տարիքային խմբերի, աղքատության դրսևորումների/չափումների, ցուցանիշների և շեմերի վերաբերյալ հատուկ որոշումները կայացվել են ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի և Ազգային վիճակագրական ծառայության կողմից կազմված Մանկական աղքատության վերաբերյալ տեխնիկական խորհրդատվական խմբի մասնակիցների կողմից: Վերջիններս ներկայացնում են հիմնական շահագրգիռ նախարարությունները և զարգացման գծով այլ գործընկերներին և ապահովում միջազգային և ազգային ստանդարտները, ինչպես նաև տվյալների հասանելիությունը: Քանի որ MODA-ն կիրառում է կյանքի ցիկլերի վրա հիմնվող մոտեցում, վերլուծությունը տրոհվել է երեք տարիքային խմբերի՝ իրենց կյանքի ընթացքում երեխաների փոփոխվող զրկանքները ներառելու համար (Աղյուսակ 1): Վեց տարեկանից ցածր երեխաների համար ընտրվել են սննդի, վաղ մանկական տարիքի կրթության և խնամքի (ՎՄՏԿԽ) տարիքային հատուկ ցուցանիշները: Դպրոցական տարիքի երեխաների (6-14 տարեկան) և դեռահասների (15-17 տարեկան) համար վերլուծությունը ներառել է կրթության, ժամանցի, սոցիալական փոխհարաբերությունների և հագուստի վերաբերյալ ցուցանիշներ: Տեղեկությունները չափվում են տնային տնտեսության մակարդակում, սակայն չափման ձևերը տարբեր են տարիքային տարբեր խմբերի դեպքում: Տարիքային բոլոր խմբերը ներառում են տնային տնտեսության մակարդակի ցուցանիշներ կոմունալ ծառայությունների (որը ներառում է ջրամատակարարման և ջեռուցման ծառայությունները) և բնակարանային պայմանների վերաբերյալ՝ խոցելիությունը երեխայի անմիջական միջավայրում չափելու նպատակով:

Աղքատության դրսևորումների չափման գործառնական նշանակությունն ապահովող ցուցանիշների ընտրությունը պայմանավորվել է

**Աղուսակ 1. Հայաստանում երեխաների խոցելիության վերլուծության համար տարիքային խմբեր և աղքատության դրսևորումներ**

| 0-5 տարեկան | 6-14 տարեկան | 15-17 տարեկան |
|---|---|---|
| Սնուցում | Կրթություն | Կրթություն |
| ՎՄՏԿԽ | Ժամանց | Ժամանց |
| | Սոցիալական հարաբերու-թյուններ | Սոցիալական հարաբերու-թյուններ |
| | Հագուստ | Հագուստ |
| Տեղեկա-տվություն | Տեղեկա-տվություն | Տեղեկա-տվություն |
| Կոմունալ ծառայու-թյուններ | Կոմունալ ծառայու-թյուններ | Կոմունալ ծառայու-թյուններ |
| Բնակարանային պայմաններ | Բնակարանային պայմաններ | Բնակարանային պայմաններ |

տվյալ տարիքային խմբում երեխայի խոցելիության դրսևորումների և համապատասխան տվյալների միջև լավագույն համադրությամբ: Ընդհանուր առմամբ, խոցելիությունը համապատասխանում է երեխայի հիմնարար իրավունքների խախտմանը: Այս առումով խոցելիությունը տարբերվում է դրա նախանշաններից և համարժեքներից: Թիվ 1 Աղյուսակը ներկայացնում է յուրաքանչյուր տարիքային խմբի աղքատության չափման կոնկրետ մանրամասները, մինչդեռ Հավելված Ա-ն տալիս է ցուցանիշների մանրամասն ցանկը՝ համապատասխան սահմանումներով:

Այստեղ կարևոր է անդրադառնալ աղքատության չափելի դրսևորումների և ցուցանիշների ընտրության ժամանակ առաջացող **սահմանափակումներին:** Մասնավորապես, 2013թ. և 2014թ. հետազոտություններն օգտագործելու մասին որոշումը սահմանափակեց մինչև վեց տարեկան երեխաների աղքատության դրսևորումների ու ցուցանիշների ընտրությունը: Այսպես օրինակ, սնուցման դրսևորումը չափվում է նախկինում երեխայի կրծքով կերակրմամբ: Չնայած նրան, որ այդ մասին տեղեկատվությունը հասանելի է տարիքային այս խմբի յուրաքանչյուր երեխայի համար, այն ամբողջական չէ: Այնուամենայնիվ, քանի որ 2014թ անտրոպոմետրիկ չափումներ արվել են, սույն զեկույցը

ներկայացնում է սնուցման կարգավիճակի գնահատումը 2014թ. համար, իսկ սնուցման համապատասխան չափումները կընդգրկվեն հաջորդ զեկույցներում: Վաղ մանկական տարիքի կրթությունը և խնամքը (ՎՄՏԿԽ) սահմանվում է մանկապարտեզ հաճախելով. սակայն, այն չի վերաբերվում մինչև 3 տարեկան երեխաներին: Հետևաբար, վերջիններս այս տեսանկյունից համարվում են ոչ խոցելի՝ այսպիսով պահպանելով համաչափությունը նույն տարիքային խմբի չափումների միջև: Ավելին, մենք չկարողացանք ապահովել առողջապահության դրսևորումների չափումը ո՛չ փոքր, ո՛չ ավելի մեծ երեխաների համար: Առողջապահության համար նման ցուցանիշներ սահմանելը դժվար է, քանի որ հետազոտությունների հիմնական տեղեկատվությունը վերաբերում է ուսումնասիրվող ժամանակահատվածում ժամանակավոր հիվանդություններին: Սա խոսում է տնային տնտեսությունների հետազոտություններում ավելի համապատասխան մանկական ցուցանիշներ ընդգրկելու անհրաժեշտության մասին, որոնցով կչափվի առողջապահության հասանելիությունը և ոչ թե առողջական վիճակն այդ պահին: Դա հնարավոր է անել առանց հարցաթերթերը էապես մեծացնելու: Օրինակ, առողջապահության համար ավելի հարմար ցուցանիշներ կլինեին պարբերաբար բժշկական ստուգում անցնելը կամ պատվաստումներ ստանալը, առողջապահական ապահովագրության հասանելիությունը, մինչդեռ համապատասխան խաղալիքների առկայության և մինչև երեք տարեկան երեխաների ծնողների ընդգրկվածության վերաբերյալ հարցերը կտրամադրեին արժեքավոր տեղեկատվություն երեխայի զարգացման մասին:

Ցուցանիշները խմբավորվում են աղքատության տվյալ դրսևորման/չափման ներքո հետևյալ տրամաբանությամբ. աղքատության տվյալ դրսևորման/չափման գծով երեխան համարվում է խոցել, եթե նա խոցելի է մեկ կամ ավելի ցուցանիշի առումով: Այս մոտեցումը, որը հայտնի է որպես «միասնական մոտեցում», հաշվի չի առնում տվյալ դրսևորման շրջանակներում խոցելիության խորությունը: Երկու ցուցանիշի առումով խոցելի երեխայի նկատմամբ վերաբերմունքը նույնն է, ինչ միայն մեկ ցուցանիշի առումով խոցելի համարվող երեխայինը: Նրանք երկուսն էլ աղքատության տվյալ դրսևորման շրջանանակերում համարվում են խոցելի: Օրինակ՝ երեխան խոցելի է համարվում բնակարանային պայմանների առումով, եթե նա ապրում է գերբնակեցված տնային տնտեսությունում, կամ կիսաքանդ պատերով և պատուհաններով տանը և/ կամ եթե առկա են երկու իրավիճակն էլ: Այս մոտեցման տրամաբանությունը կայանում է նրանում, որ չի կարելի փոխանակել մի «իրավունքը» մյուսով: Սա է ծրագրերի մշակման և քաղաքականության վերլուծության իրավունքների վրա հիմնված մոտեցման հիմնասյունը: Չնայած նրան, որ հնարավոր է կշիռներ սահմանել աղքատության կոնկրետ դրսևորումների/չափումներ համար՝ դրանց միջև առկա արժեքային հարաբերական տարբերությունը ցույց տալու համար, այս վերլուծությունը կշիռների սահմանման որևէ սխեմա չի կիրառում: Աղքատության ընտրված դրսևորումներից յուրաքանչյուրն արտացոլում է կարևոր հիմնարար իրավունք և, հետևաբար, դրանք բոլորն էլ համարվում են համարժեք դրսևորումներ (տես, de Neubourg et al., 2014թ. կշռման հետագա մանրամասների համար):

Ուսումնասիրությունը գնահատում է այն երեխաների մասնաբաժինը յուրաքանչյուր տարիքային խմբում, ովքեր խոցելի են յուրաքանչյուր ցուցանիշի և դրսևորման/չափման գծով, ինչպես նաև միաժամանակ մի քանի դրսևորումների/չափումների գծով: Այնուհետև կազմվում է տարբեր դրսևորումների/չափումների միջև համընկնման գծապատկերը և վերլուծվում միանգամից մի քանի ուղղությամբ խոցելիության ենթակա երեխաների նկարագիրը: Եվ վերջապես, օգտագործելով ՏՏԿԱՀ-ում ներառված սպառման և աղքատության փոփոխականները, հետազոտությունը վերլուծում է նաև յուրաքանչյուր տարիքային խմբում բազմակի խոցելիության և դրամական աղքատության միջև համընկնումները:

Տվյալ տարիքային խմբի երեխաների շրջանում խոցելիության դեպքերի բաշխումը ամբողջ երկրի մակարդակում ցույց է տալիս տվյալ տարիքային խմբի համար մանկական ընդհանուր խոցելիության խորությունը: Բազմաչափ խոցելիություն ունեցող երեխաներին հայտնաբերելու համար պետք է ընտրվի տարանջատման շեմ: Երեխան համարվում է բազմաչափ խոցելիություն ունեցող, եթե նրա խոցելիության մակարդակը բարձր է այդ շեմից կամ հավասար է դրան: Տարբեր շեմերի կիրառմամբ արդյունքների համեմատությունը կարող է արժեքավոր պատկերացում տալ մանկական խոցելիության ընդգրկման վերաբերյալ:

Ընդհանուր թվաքանակի գործակիցը (H) դա տվյալ տարիքային խմբում այն երեխաների թիվն է, ովքեր կազմում են այս տարիքային խմբի բոլոր երեխաների այն տոկոսը, որը խոցելի է մի շարք ուղղություններով՝

ըստ կոնկրետ տարանջատման կետի (շեմի): Խոցելիության միջին ինտենսիվությունը (A) կարող է հաշվարկվել բաժանելով բազմաթիվ ուղղություններով խոցելի երեխայի զրկանքների քանակը աղքատության ուսումնասիրվող դրսևորումների/չափումների առավելագույն քանակի վրա (d) և միջինացնելով ըստ տվյալ տարիքային խմբի խոցելի բոլոր երեխաների քանակի: Խոցելիության միջին ինտենսիվությունը արտացոլում է այն բոլոր հնարավոր զրկանքների տոկոսը, որոնք կրում է միջին խոցելի երեխան: Քանի որ ընդհանուր թվաքանակի գործակիցը զգայուն չէ խոցելիության խորության նկատմամբ, այն կարող է համապատասխանաբար ճշգրտվել (Alkire & Foster, 2011)՝ տարանջատման յուրաքանչյուր կետում՝ ընդհանուր թվաքանակը (H) բազմապատկելով միջին ինտենսիվությամբ (A): Նման ճշգրտումը թույլ է տալիս հաշվի առնել խոցելիության ինտենսիվության փոփոխությունները: Եթե մի խումբն ունի մեկ այլ խմբի նույն ընդհանուր թվաքանակը, սակայն ավելի ցածր ինտենսիվություն, ստացված ճշգրտված թվաքանակն ավելի ցածր կլինի առաջին խմբի համար: Այս տեղեկությունը կմնար չբացահայտված, եթե օգտագործվեր միայն թվաքանակի ցուցանիշը: Ճշգրտված թվաքանակի գործակիցը *(M0)* այդ դեպքում հաշվարկվում է հետևյալ կերպ.

***M0=H*A***

Ի տարբերություն թվաքանակի նախնական (չճշգրտված) գործակցի՝ ճշգրտված թիվը զգայուն է յուրաքանչյուր երեխայի խոցելիության ընդգրկունության նկատմամբ: Բացի այդ, այն ունի մի քանի օգտակար բնութագրեր, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել, թե ինչով է պայմանավորվում բազմաչափ խոցելիությունը տարանջատման յուրաքանչյուր կետում. *M0* կարող է տարալուծվել ըստ երեխաների տարբեր ենթախմբերից ստացված տվյալների, և, ըստ յուրաքանչյուր առանձին դրսևորման գծով ստացված տվյալների: Այս հաշվարկի ավելի մանրամասն նկարագրությունը, ներառյալ բոլոր ցուցանիշների բանաձևերը, ներկայացված են Հավելված Բ-ում:

Զեկույցի մնացած մասը կազմակերպված է հետևյալ կերպ. նախ, այն ներկայացնում է 0-17 տարեկան բոլոր երեխաների բարեկեցության հիմնական արդյունքները՝ խոցելիության և դրամական աղքատության հիման վրա: Հաջորդող գլուխներում ներկայացվում են չորս տարիքային խմբերի նկարագրերը, ինչպես սահմանվել է Տեխնիկական խորհրդատվական խմբի (ՏԽԽ) կողմից: Եզրակացությունները ներկայացված են վերջին գլխում:





© UNICEF/Armenia2016/Pirozzi

# 3 ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԴՐԱՄԱԿԱՆ ԵՎ ԲԱԶՄԱՁԱՓ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Թիվ 2 աղյուսակը ներկայացնում է Հայաստանում երեխաների բազմաչափ թվաքանակը` խոցելիության ինտենսիվության և ճշգրտված թվաքանակի հետ մեկտեղ: Հայաստանում, երեխաների 64 տոկոսը խոցելի է` ըստ աղքատության երկու և ավելի դրսևորումների տարանջատման կետերի: Խոցելի երեխաների մասնաբաժինը գյուղական բնակավայրերում հասնում է մինչև 82 տոկոս, մինչդեռ քաղաքային բնակավայրերում այն կազմում է 53 տոկոս:

Ընդհանուր առմամբ, երեխաների 88 տոկոսը խոցելի է աղքատության առնվազն մեկ չափելի դրսևորման տեսանկյունից: Գյուղական բնակավայրերում, գրեթե ամեն երեխա խոցելի է առնվազն մեկ դրսևորման առումով (97 տոկոս), մինչդեռ քաղաքային բնակավայրերում համապատասխան թիվը կազմում է 82 տոկոս: Գյուղական բնակավայրերի երեխաների շրջանում խոցելիությունն ավելի խիստ է արտահայտված. եթե խոցելիության միջին ինտենսիվությունը (A) 32 տոկոս է քաղաքային բնակավայրերում, գյուղական բնակավայրերում այն կազմում է 41 տոկոս: Սա նշանակում է, որ քաղաքային բնակավայրերում խոցելի երեխաները միջինում խոցելի են աղքատության 2.2 չափելի դրսևորումներում, իսկ գյուղական բնակավայրերում` 2.9: Ուստի, ճշգրտված թվաքանակը (M0) ավելի բարձր է գյուղական բնակավայրերում (0.40), քան քաղաքային (0.26):

**Աղյուսակ 2. Տարանջատման յուրաքանչյուր կետի համար բազմաչափ թվաքանակ. Բոլոր երեխաները, ըստ բնակության վայրի**

| | H | | | A | | | M0 | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ազգային | Քաղաք | Գյուղ | Ազգային | Քաղաք | Գյուղ | Ազգային | Քաղաք | Գյուղ |
| **Խոցելի 1+** | 87.6 | 81.7 | 97.1 | 35.6 | 31.7 | 40.8 | 0.31 | 0.26 | 0.40 |
| **Խոցելի 2+** | 63.7 | 52.5 | 81.7 | 43.6 | 41.4 | 45.8 | 0.28 | 0.22 | 0.37 |
| **Խոցելի 3+** | 36.7 | 26.2 | 53.6 | 54.6 | 54.4 | 54.9 | 0.20 | 0.14 | 0.29 |
| **Խոցելի 4+** | 16.4 | 11.9 | 23.6 | 69.2 | 68.2 | 70.1 | 0.11 | 0.08 | 0.17 |
| **Խոցելի 5+** | 8.5 | 6.1 | 12.4 | 80.4 | 78.7 | 81.7 | 0.07 | 0.05 | 0.10 |
| **Խոցելի 6+** | 3.9 | 2.5 | 6.3 | 90.8 | 89.3 | 91.7 | 0.04 | 0.02 | 0.06 |

**H: Թվաքանակ (խոցելիներ %), A: միջին ինտենսիվություն; M0: ճշգրտված թվաքանակի հարաբերակցություն**

Թիվ 1 պատկերը ցույց է տալիս խոցելիության տոկոսն ըստ աղքատության չափելի դրսևորումների/չափումների հստակ թվի: Երեխաների մեծամասնությունը խոցելի է երկու դրսևորմամբ, իսկ ամբողջ երկրի կտրվածքով պատկերը աննկատ շեղում ունի դեպի ձախ` ցույց տալով, որ երեխաների մեծամասնությունը խոցելի է աղքատության 0-3 դրսևորումներում: Այդուհանդերձ, դեռևս առկա են էական տարբերություններ գյուղական և քաղաքային բնակավայրերում աղքատության դրսևորումների բաշխման առումով, քանի որ գյուղական բնակավայրերում պատկերը զգալիորեն շեղված է դեպի աջ` ցույց տալով, որ ավելի շատ երեխաներ խոցելի են աղքատության 2-4 դրսևորումներում:

Միաժամանակ, չկան խոցելիության ակնհայտ գենդերային տարբերություններ: Բաշխումը թեթևակիորեն թեքված է աջ աղջիկների համար, սակայն այդ տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ:

Թիվ 3 պատկերը ցույց է տալիս կարիքավորության մակարդակը աղքատության մեկ չափելի դրսևորման/չափման շրջանակներում[6]: Խոցելիության բարձր

[6] Հարկ է նշել, որ աղքատության մի շարք չափելի դրսևորումներ հաշվարկվել են միայն որոշ տարիքային խմբի համար, հետևաբար, դրանք անմիջապես համադրելի չեն:

Պատկեր 1. Թվաքանակն ըստ աղքատության դրսևորումների/չափումների թվի. բոլոր երեխաները




Պատկեր 2. Խոցելիությունն ըստ սեռի. բոլոր երեխաները



Պատկեր 3. Թվաքանակն ըստ աղքատության դրսևորումների/չափումների. բոլոր երեխաները




Պատկեր 4. Թվաքանակն ըստ աղքատության դրսևորման/չափման և բնակավայրի. Բոլոր երեխաները



## ՔԱՐՏԵԶԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ 2 ԵՎ ԱՎԵԼԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ ԽՈՑԵԼԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՈԿՈՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ




Որքան մուգ է գույնը, այնքան բարձր է խոցելի երեխաների տոկոսը

Աղյուսակ 3. Աղքատության և ծայրահեղ աղքատության տոկոսն ըստ տարիքային խմբերի

| | Ազգային | | Քաղաքային | | Գյուղական | |
|---|---|---|---|---|---|---|
| | Աղքատ | Ծայրահեղ աղքատ | Աղքատ | Ծայրահեղ աղքատ | Աղքատ | Ծայրահեղ աղքատ |
| **Երեխաներ 0-5տ.** | 38.4 | 3.7 | 36.8 | 3.7 | 41.2 | 3.8 |
| **Երեխաներ 6-14տ.** | 34.2 | 2.8 | 34.7 | 3.0 | 33.4 | 2.5 |
| **Երեխաներ 15-17տ.** | 35.6 | 3.9 | 39.8 | 5.0 | 30.5 | 2.5 |
| **Չափահասներ 18-25տ.** | 28.9 | 2.5 | 29.3 | 3.0 | 28.2 | 1.7 |
| **Չափահասներ 26-35տ.** | 32.2 | 2.2 | 31.6 | 2.2 | 33.4 | 2.1 |
| **Չափահասներ 36-50տ.** | 29.2 | 2.4 | 29.8 | 2.7 | 28.2 | 2.0 |
| **Չափահասներ 51-65տ.** | 27.0 | 1.9 | 26.9 | 2.2 | 27.1 | 1.4 |
| **65 տարեկանից բարձր** | 31.4 | 2.2 | 31.7 | 2.3 | 31.0 | 1.9 |
| **Բոլորը** | 31.0 | 2.5 | 31.1 | 2.7 | 30.8 | 2.1 |
| **Բոլոր երեխաները** | 36.0 | 3.3 | 36.3 | 3.6 | 35.5 | 3.0 |

մակարդակ գրանցած դրսևորումների թվում են ժամանցը, կոմունալ ծառայությունները և բնակարանային խնդիրները, որոնց առումով երկու երեխայից մեկը խոցելի է: Այնուհետև, հաջորդում են սոցիալական փոխհարաբերությունները և տեղեկատվությունը:

Ինչ վերաբերում է ամբողջ երկրի մակարդակով դրամական աղքատությունը, ապա երեխաների 36 տոկոսն աղքատ է, իսկ 3 տոկոսը՝ ծայրահեղ աղքատ (Աղյուսակ 3): Միաժամանակ, ողջ բնակչության առումով աղքատ և ծայրահեղ աղքատ են համապատասխանաբար 31 և 2.5 տոկոսը[7]: Այս ցուցանիշների և խոցելիության համեմատումից պարզ է դառնում, որ երեք և ավելի ուղղությամբ խոցելի երեխաների համամասնությունը նույնն է: Երեխաների խոցելիությունն ավելի հավանական է, քան չափահասներինը: Թե՛ աղքատության, թե՛ ծայրահեղ աղքատության[8] տոկոսներն ավելի ցածր են չափահասների համար քաղաքային, ինչպես նաև գյուղական բնակավայրերում: Ավելին, ցածր տարիքի երեխաների աղքատ լինելը ամենաշատ հավանականությունն ունի:

Գյուղական և քաղաքային վայրերի համար աղքատության դրսևորումների/չափումների բաշխման (Պատկեր 4) համեմատությունից երևում է, որ քաղաք-գյուղ տարբերությունները բավականին խորն են հատկապես աղքատության կառուցվածքային դրսևորումներում: Ամենամեծ տարբերություններն արձանագրվել են կոմունալ ծառայությունների և տեղեկատվության դրսևորումներում, բայց հստակ տարբերություններ կան նաև հագուստի, սոցիալական փոխհարաբերությունների և վաղ կրթության չափումներում: Հետաքրքիր է, որ քաղաքաբնակ երեխաների համեմատ գյուղաբնակ երեխաները շատ խոցելի չեն կացարանային առումով, իսկ քաղաքաբնակ երեխաները ավելի խոցելի են սնուցման և կրթության առումով: Ժամանցի առումով մեծ տարբերություններ չկան:

[7] Հարկ է նշել, որ աղքատության մի շարք չափելի դրսևորումներ հաշվարկվել են միայն որոշ տարիքային խմբերի համար, հետևաբար, դրանք անմիջապես համադրելի չեն:

[8] Ծայրահեղ աղքատությունը վերաբերում է այն անձանց, որոնք սահմանվել են որպես ծայրահեղ աղքատ և քերսնված, որոնց մեկ չափահասի հաշվով սպառումը ցածր է աղքատության պարենային գծից (Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ, Աղքատության պատկերը և աշխատանքի շուկայի զարգացումները, 2008-2014, ՀՀ ԱՎԾ):

Պատկեր 5. Աղքատությունն ըստ տարիքային խմբերի




Պատկեր 6. Ծայրահեղ աղքատներն ըստ տարիքային խմբերի




Պատկեր 7. Թվաքանակն ըստ չափման և քվինտիլի



Պատկեր 8. Զրկանքների քանակն ըստ քվինտիլների




5-րդ և 6-րդ պատկերները ցույց են տալիս աղքատ և ծայրահեղ աղքատ բնակչության մասնաբաժիններն ըստ տարիքային խմբերի: Երեխաները կազմում են աղքատ բնակչության 26 տոկոսը, իսկ ծայրահեղ աղքատ բնակչության՝ 30 տոկոսը: Հաշվի առնելով, որ երեխաները կազմում են ընդհանուր բնակչության միայն 22 տոկոսը, այս թվերը ցույց են տալիս, որ աղքատությունն ավելի շատ է ազդում երեխաների վրա:

Ներկայացված վերլուծությունը ցույց է տալիս դրամական աղքատության և խոցելիության փոխադարձ կապը, սակայն, օգտակար կլինի դիտարկել նաև անհավասարության բաշխումը բնակչության ամենահարուստ և ամենաաղքատ քվինտիլների համար: Հաջորդ պատկերը (Պատկեր 7) ցույց է տալիս ամենաաղքատ և ամենահարուստ քվինտիլում խոցելիության մակարդակն ըստ աղքատության բոլոր դրսևորումների/չափումների:

Ամենաաղքատ քվինտիլին պատկանող երեխաների վիճակն ավելի վատ է աղքատության բոլոր դրսևորումների առումով՝ բացառությամբ սնուցմանը:

Ամենամեծ տարբերությունները գրանցվել են տեղեկատվության, կոմունալ ծառայությունների և բնակարանային պայմանների ուղղությամբ: Առկա են մեծ տարբերություններ (մոտավորապես 20 տոկոսային կետ) նաև ժամանցի և կրթության ուղղությամբ:

Այս արդյունքներից կարելի է եզրակացություններ անել ըստ քվինտիլների մի շարք կարիքների բաշխման վերաբերյալ: Դրանց կենտրոնացումը աջ կողմում զգալիորեն ավելի նկատելի է առաջին քվինտիլի երեխաների դեպքում, մինչդեռ հինգերորդ քվինտիլի երեխաների դեպքում ակնհայտ է դեպի ձախ կենտրոնացումը (Պատկեր 7): Ամենահարուստ քվինտիլի երեխաների խոցելի չլինելու հավանականությունն հինգ անգամ ավելի մեծ է իրենց ամենաաղքատ հասակակիցների համեմատ: Մինչդեռ ամենաաղքատ երեխաները գրեթե կրկնակի անգամ հակված են միաժամանակ երեք տիպի խոցելիություն ունենալուն:

Չնայած նրան, որ ամենաաղքատ քվինտիլում գտնվող երեխաները հստակորեն ավելի վատ իրավիճակում են, ամենահարուստ 25 տոկոսին պատկանող

Պատկեր 9. Խոցելիություն և սպառում - Բոլոր երեխաները




երեխաների 74 տոկոսն էլ խոցելի է աղքատության գոնե մեկ դրսևորման ուղղությամբ: Առավել կարևոր է այն, որ 44 տոկոսը խոցելի են աղքատության երկու և ավելի դրսևորումներում: Սա ցույց է տալիս, որ խոցելիության և դրամական ցուցանիշների՝ օրինակ ծախսերի միջև հարաբերությունը բարդ է և ոչ գծային: Այդ հարաբերությունը ներկայացված է ստորև Պատկեր 8-ում:

Խոցելիության և սպառման փոխհարաբերությունը բավականին տարբեր է քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև: Եկամտի ցանկացած մակարդակի դեպքում գյուղական բնակավայրերի երեխաները միշտ զգալիորեն ավելի խոցելի են, քան քաղաքային բնակավայրերի երեխաները: Երկու կորերն էլ ավելի թեք են սպառման ամենացածր մակարդակներում, ինչը նշանակում է, որ գնողունակության բարձրացումը կարող է արդյունավետ կերպով նվազեցնել երեխաների կողմից կրած զրկանքների թիվը, երբ սպառումն աղքատության գծից ցածր է[9]: Այդուհանդերձ, կորերը շատ արագ ուղղվում են սպառման աճի հետ մեկտեղ և հետևաբար, երեխաների խոցելիության վրա ազդեցությունը թուլանում է: Քաղաքային բնակավայրերի համեմատությամբ՝ գյուղական բնակավայրերում կորն ավելի թեք է թվում սպառման ցածր մակարդակում, սակայն ուղղվում է սպառման աճին զուգահեռ: Վերջինս ցույց է տալիս գյուղական բնակավայրերում ծառայությունների հասանելիության և ենթակառուցվածքների հետ կապված խնդիրների առկայությունը:

Սանկական աղքատության և խոցելիության ընդհանուր մակարդակը բավականին մտահոգիչ է: Ըստ աղքատության երկու կամ ավելի դրսևորման/չափման տարանջատման կետերի երեխաների 72 տոկոսը կամ խոցելի է կամ աղքատ, կամ էլ թե՛ խոցելի է և թե՛ աղքատ: Առկա է նաև դրամական աղքատության և խոցելիության զգալի համընկնում (Պատկեր10): Աղքատության երկու

[9]Այստեղ աղքատության գիծն երկու տարիների աղքատության գծերի միջինն է, հաշվարկված 39,731 ՀՀԴ

**Պատկեր 10. Խոցելիության (2+) և աղքատության համընկնումը**




Ոչ կարիքավոր, ոչ աղքատ (2+): 28.5 %

**Աղյուսակ 4. Խոցելիության (2+) և դրամական աղքատության համընկնումը, բոլոր երեխաները**

| | Ազգային | Քաղաքային | Գյուղական |
|---|---|---|---|
| Աղքատ և խոցելի | 27.6 | 24.8 | 32.1 |
| Միայն խոցելի | 36.1 | 27.7 | 49.5 |
| Միայն աղքատ | 7.8 | 10.9 | 2.9 |
| Ոչ աղքատ Ոչ խոցելի | 28.5 | 36.6 | 15.5 |
| աղքատ | 35.4 | 35.7 | 35.0 |
| խոցելի | 63.7 | 52.5 | 81.6 |

կամ ավելի դրսևորումների տարանջատման կետում երեխաների 28 տոկոսն աղքատ է և խոցելի: Այս ցուցանիշն ավելի մեծ է գյուղական բնակավայրերում (գրեթե երեք երեխաներից մեկը), և ավելի փոքր քաղաքային բնակավայրերում (չորսից մեկը) (տե՛ս աղյուսակ 4): Գյուղաբնակ երեխաները հատկապես խոցելի են, քանի որ նրանց համար միաժամանակ հասանելի չեն ապրանքները և ծառայությունները և դրանցից օգտվելու հնարավորությունը:

Այդուհանդերձ, ինչպես կարելի է նկատել, չնայած նրան, որ երեխաների մեկ երրորդից ավելին չի ապրում աղքատ տնային տնտեսություններում, նրանք նույնպես խոցելի են: Այս երեխաները կազմում են խոցելի երեխաների ընդհանուր թվի կեսից ավելին: Գյուղական բնակավայրերում խոցելի է նման երկու երեխայից մեկը: Հավանաբար, սրանք այն երեխաներն են, որոնք ամենայն հավանականությամբ դուրս են մնում միայն դրամական աղքատության հաղթահարմանն ուղղված միջամտություններից, և որոնք հատուկ նպատակային ծրագրերի կարիք ունեն:

Ինչպե՞ս կարելի է վեր հանել երեխաների այս տարբեր խմբերը: Թիվ 5 աղյուսակը ներկայացնում է տարբեր խմբերին հատուկ մի քանի հիմնական բնութագրիչներ: Այն երեխաները, ովքեր խոցելի են, սակայն չեն ապրում աղքատ տնային տնտեսությունում, տարիքով փոքր-ինչ ավելի մեծ են, իսկ ընտանիքի գլխավորն ավելի քիչ կրթված է, և ամենայն հավանականությամբ, զբաղվում է գյուղատնտեսական գործունեությամբ: Այս երեխաների կեսից ավելին ապրում է գյուղական բնակավայրերում: Այն երեխաները, ովքեր միաժամանակ աղքատ են և խոցելի, ամենայն հավանականությամբ, ապրում են կին գլխավոր ունեցող տնային տնտեսությունում: Վերջինս, ենթադրաբար, տարիքով փոքր-ինչ մեծ է և ավելի քիչ հավանական է, որ ունի բարձրագույն կրթություն: Ավելի հավանական է նաև, որ այս երեխաները ապրեն այնպիսի տնային տնտեսություններում, որի գլխավորը չի աշխատում կամ աշխատանքի դիմաց չի վարձատրվում: Աղքատ, սակայն ոչ խոցելի երեխաների շարքում ավելի շատ են ցածր տարիքի երեխաները (միջին տարիքը՝ 4 տարեկան), և ավելի հավանական է, որ նրանց տնային տնտեսության գլխավորը կին է: Շատ ավելի հավանական է, որ գլխավորը չի աշխատում կամ աշխատանքի դիմաց չի վարձատրվում: Միայն աղքատ երեխաների գյուղաբնակ լինելու հավանականությունն ավելի ցածր է. նրանց միայն 15 տոկոսն է ապրում գյուղական բնակավայրերում : Այս փաստը ցույց է տալիս, թե որքան բարձր է խոցելիությունը գյուղական բնակավայրերում, քանի որ գյուղաբնակ երեխաների 55 տոկոսն աղքատ չէ, սակայն խոցելի է:

Դիտարկելով բարեկեցության երրորդ հնարավոր չափումը, այն է՝ սեփական վիճակի սուբյեկտիվ գնահատականը, կարող ենք վեր հանել վերջինիս համընկնումը աղքատության և խոցելիության այստեղ սահմանված ցուցանիշների հետ: Օգտագործելով հարցաթերթի կենսապայմանների սուբյեկտիվ գնահատման բաժինը՝ կարող ենք գնահատել, թե որքան է կազմում այն երեխաների թիվը, ովքեր ապրում են այնպիսի տնային տնտեսություններում, որոնց գլխավորը համարում է, որ տնային տնտեսությունն աղքատ է կամ շատ աղքատ[10]: Երեխաների մոտ 20 տոկոսն ապրում է իրենց

| Աղյուսակ 5. Երեխաների չորս խմբերի բնութագրերը | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Բոլորը | Աղքատ և խոցելի 2+ | Միայն խոցելի | Միայն աղքատ | Ոչ մեկը |
| Տարիք | 7 | 7 | 9 | 4 | 5 |
| ՏՏ գլխավորի տարիքը | 54 | 57 | 55 | 55 | 51 |
| Արական | 53.2 | 51.0 | 53.7 | 51.9 | 54.9 |
| Իգական | 46.8 | 49.0 | 46.3 | 48.1 | 45.1 |
| ՏՏ կին գլխավոր | 23.1 | 28.8 | 22.0 | 27.3 | 17.9 |
| ՏՏ տղամարդ գլխավոր | 76.9 | 71.2 | 78.0 | 72.7 | 82.1 |
| Գլխավորը ստացել է ընդհանուր կրթություն | 31.5 | 34.2 | 38.2 | 18.1 | 22.9 |
| Գլխավորն ունի միջնակարգ կրթություն | 36.9 | 47.0 | 35.9 | 42.4 | 26.6 |
| Գլխավորն ունի բարձրագույն կրթություն | 31.6 | 18.8 | 26.0 | 39.5 | 50.5 |
| Գլխավորը չի աշխատում կամ չի վարձատրվում | 29.2 | 38.1 | 25.0 | 44.3 | 22.1 |
| Գլխավորն աշխատում է | 38.5 | 28.5 | 35.5 | 38.7 | 52.3 |
| Գլխավորն ինքնազբաղված է | 8.5 | 6.1 | 7.8 | 6.2 | 12.4 |
| Գլխավորն ինքնազբաղված է գյուղատնտեսությունում | 23.7 | 27.3 | 31.7 | 10.9 | 13.2 |
| Գլխավորն ամուսնացած է | 46.3 | 50.6 | 49.5 | 45.9 | 37.7 |
| Գլխավորն ամուրի է | 53.7 | 49.4 | 50.5 | 54.1 | 62.3 |
| Գյուղական | 41.6 | 47.7 | 54.8 | 14.6 | 24.3 |
| Քաղաքային | 58.4 | 52.3 | 45.2 | 85.4 | 75.7 |

(ա): Միջին արժեք; մյուս բոլոր բնութագրիչները տոկոսներ են

աղքատ կամ շատ աղքատ համարող տնային տնտեսություններում: Այս թիվն էապես ավելի փոքր է, քան այն երեխաների թիվը, որոնք աղքատ են և/կամ խոցելի: Երեխաների 25 տոկոսն ապրում է այնպիսի տնային տնտեսություններում, որն աղքատ է ըստ դրամական աղքատության շեմի, սակայն ոչ ըստ տնային տնտեսության գլխավորի գնահատման: Տնային տնտեսությունների 8 տոկոսը համարում է, որ իրենք աղքատ են, թեև իրականում աղքատ չեն (ըստ աղքատության շեմի): Երեխաների մոտ 19 տոկոսը թե՛ աղքատ է և թե՛ խոցելի, սակայն գլխավորն իր տնային տնտեսությունն աղքատ չի համարում: Եթե հաշվի առնենք միայն խոցելիությունը, երեխաների 48 տոկոսը խոցելի է, մինչդեռ տնային տնտեսության գլխավորն իր ընտանիքն աղքատ չի համարում:

Չնայած սա ինքնագնահատման շատ պարզ չափում է՝ այս պարզ համընկնումներից կարելի է երկու կարևոր հետևություն անել: Նախ, ինչպես հայտնի է, մարդկանց ինքնագնահատումը ճշգրտորեն չի համապատասխանում աղքատության տարբեր և ավելի օբյեկտիվ չափորոշիչների հետ: Իրականում, այս անհամապատասխանությունը բավականին կարևոր է: Երկրորդ՝ չափահասները կարող են մանկական բարեկեցության վերաբերյալ ունենալ տարբեր կարծիքներ, որոնք կարող են անտեսել օբյեկտիվ իրավիճակը և, որն ամենակարևորն է՝ երեխաների իրավունքները:

[10]Չենք կարող ներառել երեխաների սեփական գնահատման ուղղակի գնահատականները, քանի որ այս հարցերն ուղղվում են 16 և ավելի տարեկան անդամներին:

## 3.1 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպե՞ս է սոցիալական պաշտպանության համակարգն աջակցում առավել խոցելի երեխաներին: Սոցիալական քաղաքականության համապարփակ գնահատումը դուրս է սույն զեկույցի նպատակների շրջանակներից և չի կարող իրականացվել առկա տվյալների հիման վրա: Այնուամենայնիվ, օգտագործելով աղքատության ընտանեկան նպաստների վերաբերյալ հավաքագրված տվյալները, հնարավոր է ներկա իրավիճակի վերաբերյալ ավելի հստակ պատկերացում կազմել: Նպաստների համակարգը կանխիկ փոխանցումների և այլ ծառայություններից օգտվելու արտոնությունների խառը համակարգ է, որը հիմնվում է յուրաքանչյուր ընտանիքի անապահովության միավորը հաշվարկող գնահատման մեթոդի վրա: Համապատասխան միավորներից ելնելով ընտանիքը կարող է գրանցվել այս նպաստներից օգտվելու համակարգում: Սույն վերլուծության շրջանակներում մենք դիտարկել ենք այն տնային տնտեսությունները, որոնք ընտանեկան նպաստների համակարգում գրացված լինելու մասին հարցին դրական պատասխան են տվել:[11]

**Պատկեր 11. Խոցելիության (2+), աղքատության և սոցիալական նպաստների միջև համընկնումը**




Հինգ երեխայից մոտ մեկը (22 տոկոս) ապրում է ընտանեկան (աղքատության) որևէ նպաստից օգտվող ընտանիքում: Երեխաների մոտ 10 տոկոսն աղքատ է և խոցելի (2 և ավելի զրկանք) և ապրում է աղքատության ընտանեկան նպաստ ստացող ընտանիքներում: Այդուհանդերձ, չնայած նրան, որ երեխաների 17 տոկոսն աղքատ է և խոցելի, նրանք ներառված չեն աղքատության նպաստների համակարգում: Մյուս կողմից էլ, աղքատ և խոցելի երեխաների 63 տոկոսն ապրում է այնպիսի ընտանիքներում, որոնք ընտանեկան նպաստներ չեն ստանում: Միևնույն ժամանակ, խոցելի բայց ոչ աղքատ երեխաների 22 տոկոսը ստանում է աղքատության նպաստ, որը կազմում է բոլոր երեխաների 8 տոկոսը: Վերջապես, բոլոր երեխաների 6 տոկոսն աղքատ է, բայց ոչ խոցելի, սակայն նրանց ընտանիքները նպաստներ չեն ստանում:

Այս թվերը ներկայացված են թիվ 9 պատկերում, որը, նախորդ պատկերի համեմատ ներառում է ևս մեկ լրացուցիչ խումբ (Նկ. 8):

Իրենց աղքատության կարգավիճակից անկախ խոցելի երեխաներին դիտարկելիս տեսնում ենք, որ երեխաների 18 տոկոսը խոցելի է և ստանում է նպաստ, իսկ երեխաների 45 տոկոսը խոցելի է, սակայն ապրում է աղքատության նպաստների համակարգից չօգտվող ընտանիքներում: Սա հավասար է խոցելի երեխաների երեք չորրորդին:

Ինչպիսի՞ ազդեցություն ունեն ընտանեկան նպաստները երեխաների խոցելիության վրա: Հաջորդ գծանկարը (Պատկեր10) ցույց է տալիս բազմափոփոխական ռեգրեսիոն վերլուծության արդյունքները, որը դիտարկում է աղքատության 2 և ավելի չափման/դրսևորման գծով երեխայի խոցելի լինելու հավանականությունը: Առաջին հերթին հարկ է նշել, որ ծախսերի աճի ազդեցությունը շատ փոքր է. այն նույնն է, ինչ ներկայացված է թիվ 6 պատկերում, սակայն այստեղ մենք միաժամանակ դիտարկում ենք տնային տնտեսությունների և անհատական մի քանի բնութագրիչներ: Ինչպես և կարելի էր սպասել, փողը, կարևոր լինելով հանդերձ, լիովին բավարար չէ մանկական խոցելիությունը նվազեցնելու համար: Խոցելիության նվազեցման համար ամենակարևոր գործոնը տնային տնտեսության գլխավորի

[11]Հարցաթերթի թիվ 1 հարց: Այստեղ հաշվի ենք առել կանոնավոր և ոչ կանոնավոր նպաստներ ստացող ընտանիքները:

աշխատանք ունենալն է. տնային տնտեսության՝ ոչ գյուղատնտեսական ոլորտում ինքնազբաղված կամ զբաղվածություն ունեցող գլխավորի հետ ապրող երեխայի խոցելիության հավանականությունը 7 կամ 6 տոկոսային կետով ցածր է:

Նպաստ ստանալը զուգորդվում է խոցելի լինելու բարձր հավանականության հետ, որը, սակայն, չի նշանակում, թե աղքատության նպաստները որևէ կերպ ներազդում են խոցելիության առաջացման վրա: Սա նշանակում է, որ, թեկուզ մասամբ, խոցելի երեխաները գտնվում են նպաստների համակարգի թիրախում, ինչի մասին խոսվել է ավելի վաղ: Այնուամենայնիվ, նպաստները բավարար չեն առկա կորելացիոն կապը չեղարկելու համար և, հետևաբար, դրանց ազդեցությունը խոցելիության վրա բացասական չէ:

Այսպիսով, սոցիալական աջակցությունը պետք է ուժեղացվի թե՛ թիրախային խմբերը սահմանելու և թե՛ ծավալների առումով, որպեսզի հնարավոր լինի արդյունավետորեն լուծել մանկական խոցելիության խնդիրները:

Պատկեր 12. 2+ դրսևորումներում խոցելի լինելու հավանականության փոփոխությունները







© UNICEF/Armenia2016/Pirozzi

# 4 0-5 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐ

0-5 տարեկան երեխաների շրջանում  խոցելիության ամենաբարձր մակարդակը գրանցվել է բնակարանային պայմանների գծով: Երկու երեխաներից մեկն ապրում է վատ բնակարանային պայմաններում և գրեթե նույն թվով երեխաներ զրկված են կոմունալ ծառայություններից և տեղեկատվությունից: Բնակարանային պայմանների առումով թե՛ բնակարանային վատ պայմանները (մասնավորապես կիսաքանդ պատեր և պատուհաններ), թե՛ գերբնակեցվածությունն ազդում են երեքից մեկ երեխայի վրա: Երեխաների երկու հինգերորդի դեպքում ջեռուցումն իրականացվում է փայտե վառելիքի միջոցով կամ ընդհանրապես ջեռուցում գոյություն չունի, իսկ երկուսից մեկն ապրում է ինտերնետային կապ չունեցող տանը: Վաղ մանկական տարիքի կրթության և խնամքի ցուցանիշը սահմանված է միայն 3-5 տարեկան երեխաների համար, որոնք ենթադրաբար պետք է օգտվեն ֆորմալ խնամքի ծառայություններից:  Այս տեսանկյունից,  0-3 տարեկան երեխաները համարվում են ոչ խոցելի, քանի որ ենթադրվում է, որ նրանք չպետք է ստանան վաղ կրթություն և հետևաբար չեն կարող խոցելի լինել աղքատության այս դրսևորման գծով: Եթե դիտարկենք միայն 3-5 տարեկան երեխաներին, ապա կարիքավորությունն աճում է մինչև 53 տոկոս, քանի որ Հայաստանում 3-5 տարեկան երեխաների կեսից ավելին չեն օգտվում վաղ կրթության որևէ ձևից: Այս ցուցանշը հասնում է 72 տոկոսի գյուղական բնակավայրերում և մի փոքր ավելի ցածր է քաղաքային

Պատկեր 15: Ցուցանիշներն ըստ բնակավայրի




Պատկեր 13. Ցուցանիշներ, 0-5 տարեկան երեխաներ




Պատկեր 14. 0-5 տարեկան երեխաներ



**Աղյուսակ 6. Խոցելիության մակարդակը՝ ըստ հիմնական բնութագրիչների**

| | Սնուցում | ՎՄՏԿԽ | Տեղեկա-տվություն | Կոմ. ծառա-յություններ | Բնակարանային խնդիրներ |
|---|---|---|---|---|---|
| Իգական | 32.3 | 23.6 | 49.3 | 46.6 | 52.4 |
| Արական | 28.4 | 23.0 | 48.2 | 49.7 | 49.7 |
| Գլխավորը 65տ-ից երիտասարդ է | 30.4 | 22.7* | 47.5 | 47.6 | 50.2 |
| Գլխավորը 65տ.-ից ավել է | 29.2 | 26.6* | 55.4 | 51.8 | 54.5 |
| Տղամարդ գլխավոր | 29.6 | 22.7 | 46.6* | 47.7 | 48.9* |
| Կին գլխավոր | 32.3 | 25.0 | 55.8* | 50.0 | 57.7* |
| Գլխավորն չունի միջն. կրթություն | 27.7 | 36.1* | 53.3* | 56.5* | 64.6* |
| Գլխավորն ունի միջն. կրթություն | 30.6 | 21.3* | 48.0* | 47.0* | 48.9* |
| Գլխավորը չի աշխատում | 31.6* | 23.6 | 51.3* | 49.2 | 53.3* |
| Գլխավորն աշխատում է | 23.5* | 21.8 | 36.1* | 43.5 | 38.9* |
| Գլխավորն ամուրի է | 29.9 | 22.4 | 45.2* | 45.0* | 46.6* |
| Գլխավորն ամուսնացած է /համատեղ բնակվող | 30.7 | 24.7 | 54.8* | 53.9* | 58.3* |
| Երկու կամ ավելի քիչ երեխաներ | 31.2 | 20.6* | 46.7* | 46.0* | 44.5* |
| 3 և ավելի երեխաներ | 27.2 | 31.4* | 54.9* | 55.1* | 70.8* |
| Քաղաքային | 32.0 | 19.6* | 41.1* | 26.6* | 50.5 |
| Գյուղական | 27.1 | 29.7* | 62.1* | 86.3* | 51.6 |

*Աստղանիշը ցույց է տալիս, որ երկու կատեգորիաների տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է 95% մակարդակով:

**Պատկեր 16. Աղքատության դրսորումների/չափումների համընկնումներ, 0-5 տ. երեխաներ**



Պատկեր 17. Աղքատության երեք դրսևորումների / չափումների գծով համընկնումներ. 0-5 տ. երեխաներ




վայրերում, որտեղ այն կազմում է 43 տոկոս: Ելնելով մի քանի այլ նկատառումներից՝ որոշվել է մինչև 6 տարեկան երեխաների խումբը չբաժանել երկու խմբի: Այդուհանդերձ, այս արդյունքների հետ ծանոթանալիս, անհրաժեշտ է հիշել հնարավոր երկու խմբերում տարբերությունների մասին:

Չնայած ցանկացած ցուցանիշի առումով գյուղական բնակավայրերի երեխաների իրավիճակն ավելի վատ է՝ այն հատկապես վատ է ջեռուցման և բնակարանային խնդիրների առումով (Պատկեր 15):

Թիվ 6 աղյուսակը ներկայացնում է խոցելիության մակարդակը աղքատության յուրաքանչյուր դրսևորման/չափման համար՝ ըստ հիմնական բնութագրիչների: Աստղանիշը ցույց է տալիս, որ տարբերությունները վիճակագրորեն զգալի են՝ 95% վստահության մակարդակում:

Կնոջ կողմից ղեկավարվող տնային տնտեսություններում ապրող երեխաների դեպքում ավելի մեծ է տեղեկատվությունից և բնակարանային պայմաններից զրկված լինելու հավանականությունը, իսկ բարձրագույն կրթությամբ գլխավոր ունեցող տնային տնտեսություններում երեխաները պակաս խոցելի են աղքատության ցանկացած դրսևորման գծով, բացառությամբ՝ սնուցման: Նույնը կարելի է ասել նաև բազմանդամ ընտանիքների երեխաների մասին: Վերջապես, գյուղական բնակավայրերում ապրող երեխաները ավելի խոցելի են վաղ մանկական տարիքի կրթության և խնամքի, տեղեկատվության և կոմունալ պայմանների առումով:

Այնդուհանդերձ, երկփոփոխական նման վերլուծությունը խոցելիության արդյունքները վեր հանելիս չի կարող հաշվի առնել տարբեր գործոնների միջև առկա փոխազդեցությունները: Հավելված Գ-ում ներկայացրել ենք աղքատության յուրաքանչյուր դրսևորման/չափման

Պատկեր 18. Թվաքանակը ըստ զրկանքների թվի և բնակավայրի



Աղյուսակ 7. Զրկանքների թվաքանակը, - 0-5տ երեխաներ

| | H | | | A | | | M0 | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ազգային | Քաղաք. | Գյուղ. | Ազգային | Քաղաք. | Գյուղ. | Ազգային | Քաղաք. | Գյուղ. |
| Զրկանք 1+ | 90.1 | 86.2 | 97.1 | 44.7 | 39.4 | 52.9 | 0.40 | 0.34 | 0.51 |
| Զրկանք 2+ | 65.2 | 54.1 | 84.7 | 54.1 | 50.9 | 57.7 | 0.35 | 0.28 | 0.49 |
| Զրկանք 3+ | 33.6 | 22.6 | 53 | 67.4 | 66.1 | 68.3 | 0.23 | 0.15 | 0.36 |
| Զրկանք 4+ | 11.1 | 6.4 | 19.5 | 82.3 | 81.7 | 82.6 | 0.09 | 0.05 | 0.16 |

H: Թվաքանակ (խոցելիներ %), A: միջին ինտենսիվություն; M0: ճշգրտված թվաքանակի հարաբերակցություն

Պատկեր 19. 0-2 և 3-5 երեխաների զրկանքների բաշխվածությունը




մեջ խոցելի լինելու հավանականության վերաբերյալ վերլուծության արդյունքները, որոնք հիմնվում են բազմաթիվ փոփոխականների վրա:

Երեխաներից շատերի մոտ աղքատության մեկ դրսևոման/չափման գծով խոցելիությունը միաժամանակ ուղեկցվում է առնվազն մեկ կամ երկու այլ դրսևորումների գծով խոցելիությամբ (Պատկեր 16): Աղքատության դրսևորումների միջև համընկման ամենաբարձր աստիճանը տեղ է գտել տնային տնտեսության մակարդակում առկա երեք դրսևորումներում՝ տեղեկատվություն, կոմունալ ծառայություններ և բնակարանային հիմնախնդիրներ (Պատկեր 17):

Հինգ երեխաներից գրեթե մեկը խոցելի է աղքատության այս բոլոր դրսևորումներում/չափումներում (17.6 տոկոս), մինչդեռ մոտավորապես նույն թվով երեխաներ դրանցից և որևէ մեկում խոցելի չեն: Երեխաների մոտ մեկ երրորդը խոցելի է աղքատության այս երեք դրսևորումներից երկուսի գծով միաժամանակ: Հետևաբար, երեխաների մոտ 48 տոկոսը խոցելի է աղքատության է երկու կամ երեք դրսևորումների առումով:

Զրկանքների թվի բաշխումից հետևում է, որ երկուսը (Պատկեր 18) առավել հաճախ կրկնվող զրկանքների թիվն է /մոդալ թիվ/. ազգային մակարդակով 0-5 տարեկան երեխաների 32 տոկոսը խոցելի է աղքատության ճիշտ երկու դրսևորումներում: Այս ցուցանիշը նույնն է գյուղական և քաղաքային բնակավայրերի համար: Այնուամենայնիվ, քաղաքային բնակավայրերի համեմատությամբ, գյուղական բնակավայրերում բաշխումն ավելի շատ է թեքված աջ, քանի որ առկա են ավելի մեծ թվով խոցելի երեխաներ երեք և չորս դրսևորումների գծով: Քաղաքային

բնակավայրերում երեխաների մոտ 14 տոկոսը աղքատության որևէ դրսևորման գծով խոցելի չէ: Նույն թիվը գյուղական բնակավայրերում կազմում է ընդամենը 3 տոկոս:

Ազգային մակարդակում տաս երեխաներից 9-ը խոցելի է աղքատության առնվազն մեկ դրսևորման առումով, իսկ երկու երրորդը` երկու և ավելի դրսևորումների գծով (Աղյուսակ 7): Այնուամենայնիվ, առկա են էական տարբերություններ գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև: Եթե քաղաքաբնակ երեխաների 86 տոկոսը խոցելի է աղքատության մեկ և ավելի, իսկ 54 տոկոսը` երկու և ավելի դրսևորումներում, ապա գյուղական վայրերում 0-5 տարեկան (97 տոկոս) գրեթե բոլոր երեխաները խոցելի են մեկ ուղղությամբ: Գյուղաբնակ երեխաների 85 տոկոսը խոցելի է աղքատության երկու և ավելի դրսևորումների գծով: Միջինում գյուղական բնակավայրերի երեխաների խոցելիությունն ավելի խորն է, քան քաղաքային բնակավայրերի երեխաներինը. երկու և ավելի ուղղությամբ խոցելի լինելու տարանջատման շեմում խոցելիության խորությունը կազմում է 51 տոկոս քաղաքային և 58 տոկոս` գյուղական բնակավայրերում: Արդյունքում ստանում ենք ճշգրտված ավելի բարձր գործակից, որը 0.28 է քաղաքային և 0.49` գյուղական բնակավայրերի համար:

ՎՄՏԿԽ-ի ազդեցությունը խոցելիության բաշխվածության վրա ճշտելու համար, առանձին հաշվարկ է կատարվել 0-2 տարեկան և 3-5 տարեկան երեխաների համար: Առաջին խմբի համար վաղ մանկական կրթությունը որպես աղքատության չափումըընդգրկված չէ, իսկ երկրորդ խմբի համար այն ընդգրկված է: Արդյունքները ներկայացված են պատկեր 19-ում: Բաշխումը ավելի շատ աջ է թեքված 3-5 տարեկան երեխաների համար, քանի որ նրանք կարող են խոցելի լինել մեկ լրացուցիչ ուղղությամբ: Տարբերությունը, սակայն, էական չէ, և բաշխվածության պատկերը բավականին նման է երկու ուղղությամբ խոցելի երեխաների խմբի դեպքում էլ:

Որո՞նք են բազմաչափ խոցելիության հետ կապված բնութագրիչները: Հաջորդ պատկերը տոկոսային կետերով ցույց է տալիս ընտրված հիմնական բնութագրիչների սահմանային (մարգինալ) ազդեցությունը: Սահմանային ազդեցությամբ որոշվում է խոցելի լինելու հավանականության փոփոխությունը, որն, այլ հավասար պայմանների դեպքում, հետևում է

Աղյուսակ 20. 2 և ավելի չափումներում/դրսևորումներում խոցելի լինելու հավանականության փոփոխությունները, երեխաներ 0-5



**Պատկեր 21. Խոցելիության մակարդակն՝ ըստ աղքատության կարգավիճակի, 0-5տ. երեխաներ**




հիմնական փոփոխականի մեկ միավորը փոփոխության ենթարկելիս: Այսպես օրինակ, տարիքի սահմանային ազդեցությունը իրենից ներկայացնում է տարիքի ևս մեկ լրացուցիչ միավորի թողած ազդեցությունը: Տարիքի մեկ ամսով ավելանալը 6,3 տոկոսային կետով նվազեցնում է խոցելի լինելու հավանականությունը: Կրկնակի փոփոխականների դեպքում սահմանային ազդեցությունը հաշվարկվում է ըստ առաջնային համարվող բնութագրիչի, որը, սակայն, այս զեկույցում ներկայացված չէ[12]: Ամենակարևոր բնութագրիչներից են տնային տնտեսության գլխավորի կրթությունը, նրա աշխատանքային կարգավիճակը և գյուղական բնակավայրերում ապրելը:

Կրթության բարձր մակարդակ (ավարտել է միջնակարգ դպրոց և ավելին) ունեցող տնային տնտեսության գլխավորի պարագայում խոցելիության հավանականությունը նվազում է 10 տոկոսային կետով, իսկ եթե ՏՏ գլխավորն աշխատող է, ապա գրեթե 8 տոկոսային կետով ավելի քիչ հավանական է, որ երեխաները խոցելի լինեն աղքատության երկու և ավելի դրսևորումներում: Եթե տնային տնտեսության գլխավորը ինքնազբաղված է ոչ գյուղատնտեսական ոլորտում, գրեթե 24 տոկոսային կետով ավելի քիչ հավանական է, որ երեխաները խոցելի լինեն երկու և ավելի դրսևորումներում, մինչդեռ եթե նրանք ապրում են գյուղական բնակավայրում, խոցելի լինելը 22 տոկոսային կետով ավելի հավանական է: Հետաքրքիր է, որ մեկ շնչին ընկած ամսական սպառման՝ 1000 ՀՀԴ-ով ավելացումն էապես չի նվազեցնում խոցելի լինելու հավանականությունը (եթե նույնիսկ վիճակագրորեն նշանակալի է):

Աղքատ երեխաները,զգալիորեն ավելի խոցելի են աղքատության բոլոր դրսևորումների գծով՝ բացառությամբ սնուցման (Պատկեր 21): Դրամական աղքատության (և դրա հիմքում ընկած սպառման) և խոցելիության միջև փոխադարձ կապերը հեռու են գծային լինելուց:

Հետևյալ պատկերը ցույց է տալիս խոցելիության և սպառման միջև փոխադարձ կապը ըստ աղքատության դրսևորումների և բնակության վայրի: Որքան թեք է գիծը, այնքան ավելի ուժեղ են այդ կապերը: Ինչպես կարող ենք տեսնել, աղքատության տարբեր դրսևորումների և տարբեր բնակության վայրերի դեպքում գծերի ձևերը բավականին տարբեր են:

Սնուցման և ՎՏՄԿԽ-ի առումով գծերը գրեթե հարթ են գյուղական և քաղաքային բնակավայրերում՝ ցույց տալով, որ սպառման աճը շատ չի նվազեցնում խոցելիությունն աղքատության այս երկու դրսևորումներում: Դրան հակառակ, տեղեկատվության գիծը բավականին թեք է, ընդ որում սպառման ավելի բարձր մակարդակներում թեքությունն աճում է գյուղական բնակավայրերի համար: Կոմունալ ծառայությունների դեպքում կորը շատ հարթ է՝ քաղաք-գյուղ մեծ տարբերությամբ: Սրանից հետևում է, որ աղքատության այս դրսևորման առումով խնդիրը կայանում է հիմնականում ենթակառուցվածքների բացակայության և ծառայությունների հասանելի չլինելու մեջ: Վերջապես, բնակարային պայմանների կորը թեք է եկամտի ցածր մակարդակում՝ ցույց տալով, որ այդ երեխաների և ընտանիքների համար գնողունակության բարձրացումը կարող է նվազեցնել խոցելիությունը: Միևնույն ժամանակ, կորը բավականին կտրուկ ուղղվում է բաշխվածության առաջին հատվածում:

[12]Օրինակ՝ Քաղաքային բնակավայր, իգական սեռ կամ տնային տնտեսության գլխավորը չի աշխատում բնութագրիչները չեն հաղորդվում: Իսկ գյուղական, արական սեռի և տնային տնտեսության գլխավորի աշխատանք բնութագրիչները պետք է դիտարկվեն «բազիսային/հիմնական կատեգորիայի համեմատությամբ»:

Աղյուսակ 22. Սպառում և խոցելիության դրսևորումներ/չափումներ Երեխաներ 0-5







Սպառման և խոցելիության միջև փոխհարաբերությունը (Պատկեր 23) դիտարկելիս, առաջին հերթին նկատում ենք գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև մեծ տարբերությունները: Եկամտի ցանկացած մակարդակում գյուղական բնակավայրերի երեխաներն ավելի խոցելի են, քան քաղաքային բնակավայրերինը: Ի դեպ, այս երկու գծերն իրար մոտենալու որևէ միտում չեն դրսևորում: Երկու գծերն էլ ավելի թեք են գրաֆիկի ձախ կողմում՝ ցույց տալով խոցելիության և սպառման միջև ավելի սերտ կապերը, իսկ սպառման աճի հետ մեկտեղ դրանք ուղղվում են: Երկու գիծն էլ նույն անկյունի տակ են, սակայն գյուղականը, կարծես թե ավելի թեք է սպառման ավելի բարձր մակարդակում:

Աղյուսակ 23. Խոցելիություն և սպառում 0-5տ. երեխաներ




Պատկեր 24. Աղքատության և խոցելիության համընկնումը




Վերջապես, աղքատության երկու և ավելի դրսևորումների տարանջատման կետում նկատում ենք, որ երեխաների գրեթե մեկ երրորդը (31 տոկոս) միաժամանակ թե՛ աղքատ է և թե՛ խոցելի:

Այդուհանդերձ, նույն թվով երեխաներ (35 տոկոս) խոցելի են, թեև չեն ապրում դրամապես աղքատ տնային տնտեսությունում: Տարանջատման այս կետում միայն 27 տոկոսն է, որ ո՛չ աղքատ է, ո՛չ խոցելի (Պատկեր 24):

## 4.1 ԿԱՐԵՎՈՐ ԱՆԴՐԱԴԱՐՁ. ՓՈՔՐ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.

Այս բաժինն ուսումնասիրում է 5 տարեկանից ցածր երեխաների ֆիզիկական զարգացումը՝ օգտագործելով 2014թ.-ին հավաքագրված անտրոպոմետրիկ տվյալները: Քանի որ տվյալները հավաքագրվել են միայն այդ տարվա համար, հնարավոր չի եղել դրանք կիրառել ընդհանուր խոցելիության վերլուծության մեջ: Այդուհանդերձ, հաշվի առնելով նյութի կարևորությունը, այստեղ ներկայացվում են հիմնական եզրահանգումները: Անտրոպոմետրիկ ցուցանիշները հաշվարկվել են ԱՀԿ մեթոդաբանության համաձայն, 0-59 ամսական երեխաների համար: Արդյունքում 5 տարեկան երեխաները դուրս են մնացել և, հետևաբար, չկա լիակատար համընկնում այս խմբի և վերլուծության մնացած մասերում դիտարկող տարիքային առաջին խմբի միջև:

Հայաստանում երեխաների 18 տոկոսը թերաճ է, իսկ 16 տոկոսը գերքաշ: Գյուղական բնակավայրերում թերաճ երեխաները կազմում են ընդհանուրի մեկ հինգերորդ մասը, իսկ գերքաշ երեխաների ամենամեծ խումբը կենտրոնացած է քաղաքային բնակավայրերում (Պատկեր 25):

Պատկեր 25. 0-59 ամսական թերաճ կամ գերքաշ երեխաների համամասնությունը



Այս երկու ցուցիչանիշների համակցված ներառումը սնուցման դրսևորման մեջ թույլ է տալիս եզրակացնել, որ հայաստանցի երեխաների 25 տոկոսը խոցելի առաջին կամ երկրորդ ցուցանիշով կամ, ավելի փոքր չափով, երկու ցուցանիշով էլ:

Վերլուծության մնացած մասերում քննարկված աղքատության բոլոր դրսևորումների/չափումների կապը թերաճության և գերքաշության ցուցանիշների հետ հաշվարկելն այստեղ անհնար է: Այնուամենայնիվ, հնարավոր է դիտարկել տնային տնտեսություններին առնչվող երկու դրսևորումների՝ բնակարանային խնդիրների և կոմունալ ծառայությունների համընկնման աստիճանը թերաճության և գերքաշության հետ (Պատկեր 26): Աղքատության երեք դրսևորումների համընկնումը շատ սահմանափակ է: Այդուհանդերձ, երեխաների մոտ 10 տոկոսը թերաճ է և զրկված կոմունալ ծառայություններից, իսկ 9 տոկոսը գերքաշ է և զրկված կոմունալ ծառայություններից: Կոմունալ ծառայությունների և բնակարանային պայմանների առումով կարիքավոր երեխաների շրջանում թերաճ լինելու հավանականությունը ավելի բարձր է ոչ խոցելի երեխաների համեմատ: Ինչ վերաբերում է գերքաշությանը, դրա մակարդակը զգալի տարբեր չէ խոցելի և ոչ խոցելի երեխաների պարագայում:

Աղքատ ընտանիքների երեխաների թերաճ և գերքաշ լինելու հավանականությունն ավելի մեծ է:

**Պատկեր 27. Թերաճ և գերքաշ երեխաների համամասնությունը աղքատ, ծայրահեղ աղքատ և ոչ աղքատ ընտանիքներում**




**Պատկեր 26. Թերաճ և գերքաշ երեխաների համամասնությունն ըստ ՏՏ կարիքների**




Մասնավորապես, ծայրահեղ աղքատության մեջ ապրող չորս երեխաներից մեկը գերքաշ է և դրանից փոքր-ինչ ցածր տոկոսը (24 տոկոս) թերաճ է:

Այս արդյունքները հաստատվել են բազմափոփոխական ռեգրեսիայի վերլուծությամբ (Պատկեր 29): Տնային տնտեսությունների այլ բնութագրիչների վերահսկման/առանձնացման պարագայում ամսական 1000 ՀՀԴ-ով ծախսերի ավելացման ազդեցությունը մոտ է զրոյի և վիճակագրորեն նշանակալի չէ: Թերաճության և գերքաշության հետ կապված ամենակարևոր գործոնը տարիքն է, իսկ որպես նախադրյալ ամենից մեծ ազդեցությունն ունի տնային տնտեսության գլխավորի աշխատանք ունենալու փաստը: Եթե ՏՏ գլխավորը զբաղվում է իր սեփական գործով ոչ գյուղատնտեսության ոլորտում, երեխայի գերքաշ լինելու հավանականությունը 9 տոկոսային կետով ավելի ցածր է տնային տնտեսության գործազուրկ գլխավորի հետ ապրող երեխաների համեմատությամբ: Այդուհանդերձ, պարզվել է, որ այս գործոնների մեծ մասը վիճակագրորեն նշանակալի չեն: Ընդհանրապես հիմնական բնութագրիչների և այս երկու ցուցանիշների կապը կարծես թե թույլ է: Հետևաբար, թերաճության և գերքաշության առավել խորը պատճառները պետք է ավելի մանրամասնորեն դիտարկվեն հետագա հետազոտությունների շրջանակում, ինչը, ցավոք, դուրս է այս զեկույցի շրջանակից և հնարավորություններից:

Աղյուսակ 28. Ֆիզիկական զարգացում և սպառում - 0-59 ամսեկան երեխաներ




Պատկեր 29. Թերաճ և գերքաշ լինելու հավանականության փոփոխությունը








© UNICEF/Armenia2016/Pirozzi

# 5 6 – 14 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐ

6-14 տարեկան երեխաների շրջանում խոցելիության բարձր աստիճանը գրանցվել է ժամանցի և սոցիալական փոխհարաբերությունների դրսևորումների ուղղությամբ: Երկու երեխաներից մոտ մեկը խոցելի է աղքատության այդ դրսևորումներից յուրաքանչյուրում (Պատկեր 31): Խոցելիության բարձր աստիճան է արձանագրվել նաև ՏՏ կոմունալ ծառայությունների և բնակարանային խնդիրների մակարդակի չափումներում: Բնակարանային խոցելիությունը պայմանավորված է բնակարանային խնդիրներով (մասնավորապես քանդված պատեր և պատուհաններ), մինչդեռ կոմունալ ծառայությունների առումով խոցելիուությունը հիմնականում պայմանավորված է ջեռուցման ցուցանիշով: Երեք երեխայից ավելի քան մեկը խոցելի է կրթության առումով, որը հիմնականում գրեթե ամբողջովին բխում է երեխայի համար սովորելու և տնային աշխատանքները կատարելու պատշաճ տեղի բացակայությունից: Սա ամենայն հավանականությամբ կապված է տարածքի խնդրի հետ: Եթե գյուղական բնակավայրերում ապրող երեխաներն ընդհանուր առմամբ ավելի խոցելի են աղքատության բոլոր դրսևորումների և ցուցանիշների առումով, ապա քաղաքային բնակավայրերի երեխաների դեպքում ավելի մեծ է կրթության առումով խոցելի լինելու հավանականությունը: Այս պատկերը ստացվում է հիմնականում տնային աշխատանքները կատարելու տեղի բացակայության ցուցանիշի բարձր լինելու արդյունքում (Պատկեր 32): Միևնույն ժամանակ քաղաքային երեխաների շրջանում գերբնակեցված բնակարաններում ապրելու հավանականությունն ավելի մեծ է: Սա մատնանշում է քաղաքային միջավայրում տարածքի խնդրի առկայությունը:

Այս տարիքային խմբում չկան զգալի սեռային տարբերություններ աղքատության տարբեր դրսևորումների գծով (Աղյուսակ 8): Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններում ապրող երեխաներն ավելի խոցելի են ժամանցի,

Աղյուսակ 8. Խոցելիության մակարդակն ըստ հիմնական բնութագրիչների, 6-14տ. Երեխաներ

| | Կրթու-թյուն | Ժամանց | Սոցիա-լական | Հագուստ | Տեղեկա տվություն | Կոմ. ծառայու-թյուն | Բնակարա-նային պայման. |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Իգական** | 36.4 | 53.1 | 50.6 | 20.3 | 41.3 | 52.6 | 46.6 |
| **Արական** | 36.9 | 51.9 | 45.9 | 20.6 | 40.7 | 51.4 | 45.5 |
| **Գլխավորը 65տ.-ից երիտասարդ է** | 36.4 | 53.1 | 47.5 | 21.2 | 40.2 | 50.4 | 44.3 |
| **Գլխավորը 65տ.-ից բարձր է** | 37.6 | 51.0 | 50.0 | 18.4 | 43.0 | 56.2 | 50.9 |
| **Տղամարդ գլխավոր** | 34.4 | 50.2* | 48.1 | 18.7 | 38.1* | 51.8 | 43.4* |
| **Կին գլխավոր** | 44.2 | 60.0* | 48.3 | 26.3 | 50.5* | 52.7 | 54.7* |
| **Թերի միջն կրթություն** | 35.2 | 53.5 | 44.8* | 20.7 | 40.4 | 54.1 | 44.8 |
| **Միջնակարգ կրթություն** | 39.1 | 50.9 | 53.5* | 20.1 | 41.9 | 48.6 | 48.0 |
| **Գլխավորը չի աշխատում** | 46.3* | 57.7 | 50.4 | 22.7 | 42.7 | 40.2* | 53.3* |
| **Գլխավորն աշխատում է** | 32.4* | 51.6 | 45.3 | 19.9 | 39.4 | 55.6* | 42.1* |
| **Ամուրի** | 35.2 | 49.1* | 49.3 | 17.0* | 37.4* | 49.9 | 43.2 |
| **Ամուսնացած/ համատեղ բնակվող** | 38.5 | 56.8* | 46.7 | 24.8* | 45.5* | 54.5 | 49.5 |
| **2 կամ ավելի քիչ երեխաներ** | 34.3* | 49.5 | 46.8 | 17.0* | 37.3* | 46.0* | 39.4* |
| **3 կամ ավելի երեխաներ** | 41.9* | 58.9 | 51.1 | 28.0* | 48.9* | 64.7* | 60.2* |
| **Քաղաքային** | 41.8* | 52.5 | 43.2* | 15.3* | 30.4* | 29.7* | 44.5 |
| **Գյուղական** | 28.7* | 52.4 | 55.9* | 28.5* | 57.5* | 86.7* | 48.5 |

*Աստղանիշը ցույց է տալիս, որ երկու կատեգորիաների տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է 95% մակարդակով:

Պատկեր 30. Ցուցանիշներ. Երեխաներ 6-14




Պատկեր 31. Զափումներ- 6-14 տ. երեխաներ



Պատկեր 32. Ցուցանիշներն ըստ բնակավայրի. 6-14տ. երեխաներ




տեղեկատվության և բնակարանային պայմանների առումով, իսկ բազմանդամ ընտանիքներում (երկու և ավելի քույրեր և եղբայրներ) ապրող երեխաները խոցելի են բոլոր ուղղություններով՝ բացի ժամանցից և սոցիալական փոխհարաբերություններից: Եթե տնային տնտեսության գլխավորն աշխատում է, ապա ավելի քիչ հավանական է, որ երեխաները խոցելի լինեն կրթության և բնակարանային պայմանների առումով, նույնիսկ եթե նրանք ավելի խոցելի թվան կոմունալ ծառայությունների գծով: Այդուհանդերձ, երկփոփոխական վերլուծությունը, ինչպես ներկայացված է սույն աղյուսակում, չի արտացոլում բազմակի գործոնների միաժամանակյա ազդեցությունը, իսկ երբ խմբերը փոքր են, տարբերությունները զգալի են թվում կիրառված ընտրության ազդեցության պատճառով: Օրինակ՝ աշխատում է/չի աշխատում երկմաս կատեգորիայում ներառված է գյուղատնտեսական աշխատանքը: Եթե գյուղական բնակավայրերում տնային տնտեսության գլխավորը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսական աշխատանքով, ապա այդ ընտանիքների երեխաներն

Պատկեր 33. Զափումների համընկնում, 6-14 տ. երեխաներ




ավելի հավանական է, որ զրկված լինեն կոմունալ ծառայություններից այն պատճառով, որ ապրում են գյուղական բնակավայրում:

Իրականում, գյուղական բնակավայրերի երեխաների շրջանում ավելի մեծ է սոցիալական փոխհարաբերությունների, հագուստի, տեղեկատվության և կոմունալ ծառայությունների գծով խոցելի լինելու հավանականությունը: Ինչպես վերը նշվել էր, ավելի քիչ հավանական է, որ նրանք խոցելի լինեն կրթության առումով:

Երեխաների ճնշող մեծամասնության համար աղքատության մեկ դրսևորման գծով խոցելիությունը միակը չէ: Աղքատության որևէ մեկ դրսևորմամբ խոցելի երեխաների շուրջ մեկ երրորդը խոցելի է նաև 2-3 լրացուցիչ ուղղություններով (Պատկեր 33): Միայն մեկ կոնկրետ ուղղությամբ խոցելի երեխաների տոկոսը

Պատկեր 34. 3 դրսևորումների համընկնումը, 6-14տ երեխաներ




Խոցելի չէ որևէ դրսևորման մեջ 22.7%

Աղյուսակ 9. Խոցելիության թվաքանակն ըստ տարանջատման կետի, 6-14տ երեխաներ

| | H | | | A | | | M0 | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդ. | Քաղաք. | Գյուղ. | Ընդ. | Քաղաք. | Գյուղ. | Ընդ. | Քաղաք. | Գյուղ. |
| Խոցելի 1+ | 92.9 | 89.2 | 98.7 | 45.6 | 41.2 | 51.9 | 0.42 | 0.37 | 0.51 |
| Խոցելի 2+ | 80.2 | 72.9 | 91.7 | 50.6 | 47.3 | 54.7 | 0.41 | 0.34 | 0.50 |
| Խոցելի 3+ | 57.4 | 47.0 | 73.6 | 59.4 | 57.6 | 61.2 | 0.34 | 0.27 | 0.45 |
| Խոցելի 4+ | 34.3 | 26.7 | 46.0 | 70.5 | 68.7 | 72.2 | 0.24 | 0.18 | 0.33 |
| Խոցելի 5+ | 19.2 | 14.1 | 27.0 | 81.0 | 79.0 | 82.7 | 0.16 | 0.11 | 0.22 |
| Խոցելի 6+ | 9.3 | 6.0 | 14.5 | 91.1 | 89.2 | 92.4 | 0.09 | 0.05 | 0.13 |

H: Թվաքանակ (խոցելիներ %), A: միջին ինտենսիվություն; M0: ճշգրտված թվաքանակի հարաբերակցություն

Պատկեր 35. Թվաքանակն՝ ըստ զրկանքների թվի և բնակավայրի, 6-14տ. երեխաներ



Պատկեր 36. Երկու և ավելի ուղղությամբ կարիքավոր լինելու հավանականության փոփոխությունները, 6-14տ. երեխաներ




աղքատության յուրաքանչյուր դրսևորման գծով երեք տոկոսից էլ ցածր է (ավելի հստակ լինելու համար, այս խումբը ներկայացված չէ գրաֆիկում), մինչդեռ երեխաների 3.5 տոկոսը խոցելի է միաժամանակ յոթ դրսևորմամբ:

Համընկնման ամենաբարձր աստիճանը նկատվում է սոցիալական փոխհարաբերությունների, տեղեկատվության և կոմունալ ծառայությունների ուղղությամբ (պատկեր 34): Ավելի քան չորս երեխաներից մեկը խոցելի է աղքատության այս դրսևորումներից առնվազն մեկում: Հինգ երեխաներից գրեթե մեկը խոցելի է երեքում, իսկ տասից մեկը խոցելի է կամ սոցիալական փոխհարաբերությունների և կոմունալ ծառայությունների կամ էլ տեղեկատվության և կոմունալ ծառայությունների առումով: Երեխաների միայն վեց տոկոսն է զրկված տեղեկատվությունից:

Երեխաների մեծ մասը խոցելի է աղքատության երկու կամ երեք դրսևորումներում (երեքն իրենից ներկայացնում է ազգային մակարդակում առավել հաճախ կրկնվող, այն է՝ մոդալ թիվը, Պատկեր 32): Ինչ

**Պատկեր 37. Խոցելիության մակարդակն ըստ աղքատության կարգավիճակի, 6-14տ. երեխաներ**




վերաբերում է կրտսեր տարիքային խմբին, գյուղաբնակ երեխաներն ընդհանուր առմամբ ավելի խոցելի են, որն արտացոլվում է բաշխվածության դեպի աջ թեքված լինելով: Խոցելիության մակարդակն ավելի բարձր է երեխաների ավելի մեծ քանակի դեպքում: Քաղաքային բնակավայրերի երեխաները՝ գյուղաբնակների համեմատ պակաս խոցելի են: Քաղաքաբնակ երեխաների տասը տոկոսը խոցելի չէ աղքատության որևէ դրսևորման մեջ, մինչդեռ գյուղաբնակ երեխաների միայն մեկ տոկոսի մոտ է արձանագրվել նման իրավիճակ:

Հայաստանում տարիքային այս խմբի երեխաների ճնշող մեծամասնությունը խոցելի է աղքատության առնվազն մեկ դրսևորմամբ, սակայն, ինչպես արդեն նշվել է, գյուղական բնակավայրերում խոցելի են գրեթե բոլոր երեխաները (99 տոկոս) (Աղյուսակ 9): Հինգ երեխայից շուրջ չորսը խոցելի է երկու և ավելի ուղղությամբ, և ավելի պակաս քան երեքը (57 տոկոս) խոցելի են երեք և ավելի ուղղությամբ: Գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև տարբերությունն արտացոլվում է նաև խոցելիության խորության մեջ: Այսպես օրինակ, քաղաքային բնակավայրերում 2+ տարանջատման կետում խոցելի երեխաները խոցելի են միջինում աղքատության 3.3 դրսևորումներում (47 տոկոսը աղքատության 7 դրսևորումներում), մինչդեռ գյուղական բնակավայրերի երեխաները խոցելի են 3.8 դրսևորումներում: Այս փաստն արտացոլված է գյուղական բնակավայրերի երեխաների խոցելիության ճշգրտված (0.50) ավելի բարձր գործակցով քաղաքայինի համեմատ (0.34):

Երկու և ավելի դրսևորումները որպես տարանջատման կետ դիտարկելիս պատկեր 36-ը ցույց է տալիս բազմաչափ ռեգրեսիայի արդյունքները՝ որոշ հիմնական բնութագրիչների խոցելի լինելու հավանականության վրա ունեցած ազդեցության տեսանկյունից:

Գնողունակության/ծախսերի աճի ազդեցությունը աղքատության դրսևորումների վրա փոքր է, թեև վիճակագրության տեսանկյունից՝ նշանակալի: Տղաները մոտ 4 տոկոսային կետով ավելի քիչ հավանականություն ունեն խոցելի լինելու, քան աղջիկները: Այն երեխաները, ում տնային տնտեսության գլխավորն աշխատում է կամ զբաղվում է սեփական գործով գյուղատնտեսությունից տարբեր ոլորտում, նույնպես ավելի քիչ հավանականություն ունեն խոցելի լինելու աղքատության երկու և ավելի դրսևորումներում: Գյուղական բնակավայրում ապրելը 16 տոկոսային կետով ավելացնում է երեխայի խոցելի լինելու հավանականությունը:

Աղքատ երեխաները շարունակաբար ավելի խոցելի են աղքատության յուրաքանչյուր դրսևորման մեջ, քան ոչ աղքատ երեխաները (Պատկեր 34): Այդուհանդերձ, սպառման և բազմաչափ խոցելիության միջև հարաբերությունը բավականին տարբեր է աղքատության տարբեր դրսևորումներում (Պատկեր 38):

Ընդհանուր առմամբ, թե՛ գյուղական և թե՛ քաղաքային կորերը ավելի թեք են սպառման ամենացածր մակարդակներում, ինչը նշանակում է, որ սպառման աճն էապես կնվազեցնի խոցելիությունը և կորերը կուղղվեն սպառման աճի հետ մեկտեղ: Սա պարզ երևում է կրթության, հագուստի և բնակարանային խնդիրների չափումներում: Սոցիալական փոխհարաբերությունների և կոմունալ ծառայությունների կորերն ընդհանուր առմամբ ավելի հարթ են, ինչը նշանակում է, որ գնողունակության աճը շատ քիչ կարող է ազդել խոցելիության նվազեցման վրա:

Գյուղական/քաղաքային տարբերություններն ինչ որ չափով առկա են աղքատության ցանկացած դրսևորման մեջ: Սակայն նման երկատվածության ամենաբարձր աստիճանը կոմունալ ծառայությունների գծով է: Ավելին, կոմունալ ծառայությունների կորը գրեթե

Պատկեր 38. Սպառում և խոցելիության դրսևորումներ/չափումներ 6-14տ. երեխաներ







հարթ է գյուղական բնակավայրերում, ինչը հուշում է այդ ծառայությունների հասանելիության բացակայության մասին՝ ենթակառուցվածքի խնդիրների պատճառով:

Հաջորդ գրաֆիկը (Պատկեր 39) ամփոփում է զրկանքների քանակի և սպառման միջև հարաբերությունը: Գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև տարբերությունները ակնհայտ են. գյուղական բնակավայրերի երեխաները սպառման

ցանկացած մակարդակի դեպքում ավելի խոցելի են: Կրկին կորն ավելի թեք է սպառման ավելի ցածր մակարդակում և ուղղվում է սպառման ավելացմանը զուգընթաց: Այս փոխադարձ կապն առավել ակնհայտ է գյուղական բնակավայրերի դեպքում:

Խոցելիության և դրամական աղքատության համընկնումը դիտարկելիս ակնհայտ է, որ երեք երեխաներից գրեթե մեկը թե՛ աղքատ է և թե՛ խոցելի, հետևաբար, երեխաների մեկ երրորդը պատկանում է ամենախոցելի խմբին: Միևնույն ժամանակ, 6-14 տարեկան երեխաների 3 տոկոսից պակասը աղքատ է նաև դրամապես՝ առանց խոցելի լինելու: Այդուհանդերձ, տարիքային այս խմբի երեխաների կեսը խոցելի է աղքատության երկու և ավելի դրսևորումներում, չնայած նրանք չեն ապրում դրամապես աղքատ տնային տնտեսություններում: Հինգ երեխայից մեկից պակասն է, որ ոչ աղքատ է, ոչ էլ խոցելի աղքատության երկու և ավելի դրսևորումներում:

Պատկեր 39. Խոցելիություն և սպառում 6-14 տ. երեխաներ




Պատկեր 40. Խոցելիության և աղքատության համընկնումը




Ո՛չ աղքատ և ոչ էլ խոցելի (2+): 17%

Պատկեր 41. Ցուցանիշներ, 15-17 տ. երեխաներ





© UNICEF/Armenia2016/Pirozzi

# 6 15-17 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐ

Հայաստանում դեռահասները հիմնականում խոցելի են ժամանցի գծով (50 տոկոս): Աղքատության այդ դրսևորման երկու ցուցանիշների՝ դրսում խաղալու տարածքի և գրքերի ուղղությամբ համապատասխանաբար խոցելի է երեխաների 37 և 23 տոկոսը: Սա նշանակում է, որ այս ցուցանիշների գծով համընկնման միտումներ չկան և որ երեխաները խոցելի են այս ցուցանիշներից մեկի կամ մյուսի գծով: Դեռահասների խոցելիությունը բարձր է նաև կոմունալ ծառայությունների (կրկին ջեռուցման ցուցանիշով պայմանավորված) և բնակարանային պայմանների գծով: Ավելի կրտսեր տարիքային խմբի համեմատությամբ՝ այս խմբում ավելի ցածր է տեղեկատվությունից զրկված լինելու հավանականությունը, ինչը հավանաբար պայմանավորված է հասանելիության որոշ չափով տարբեր պատկերացմամբ: Ավելի ավագ տարիքի երեխաների համար հասանելիությունը գնահատվում

Պատկեր 42. Աղքատության դրսևորումներ 15-17տ. երեխաներ




Պատկեր 43. Ցուցանիշները ըստ բնակավայրի



Աղյուսակ10. Խոցելիության տոկոսն՝ ըստ աղքատության դրսևորումների/չափումների և հիմնական բնութագրիչների, 15-17տ. երեխաներ

| | Կրթու-թյուն | Ժամանց | Սոցիա-լական | Հագուստ | Տեղեկատվություն | Կոմ. ծառայու-թյուն | Բնակա-րանային պայման. |
|---|---|---|---|---|---|---|---|
| Իգական | 9.6 | 46.8 | 32.3 | 21.6 | 35.9* | 54.5 | 47.9 |
| Արական | 14.0 | 52.7 | 27.5 | 24.0 | 23.7* | 56.7 | 48.2 |
| Գլխավորը 65տ.-ից երիտասարդ է | 11.1 | 52.6 | 27.7 | 23.6 | 28.5 | 54.6 | 46.3 |
| Գլխավորը 65տ.-ից բարձր է | 13.6 | 44.4 | 34.1 | 21.4 | 31.2 | 57.9 | 51.6 |
| Տղամարդ գլխավոր | 12.0 | 49.8 | 28.3 | 21.9 | 27.6 | 54.5 | 44.6* |
| Կին գլխավոր | 11.8 | 50.7 | 34.9 | 26.4 | 35.5 | 59.7 | 59.9* |
| Թերի միջն. կրթություն | 35.0* | 55.8 | 22.3 | 29.8 | 36.7 | 58.3 | 55.4 |
| Միջնակարգ կրթություն | 8.5* | 49.1 | 30.9 | 21.8 | 28.2 | 55.3 | 46.9 |
| Գլխավորը չի աշխատում | 17.0 | 52.3 | 31.6 | 19.7 | 32.1 | 51.8 | 55.7 |
| Գլխավորն աշխատում է | 10.0 | 51.5 | 24.5 | 24.4 | 28.1 | 54.5 | 44.6 |
| Ամուրի | 4.2* | 41.1 | 32.2 | 23.7 | 31.5 | 59.3 | 43.7 |
| Ամուսնացած/ համատեղ բնակվող | 13.1* | 51.3 | 29.4 | 22.8 | 29.0 | 55.1 | 48.7 |
| 2 կամ ավելի քիչ երեխաներ | 10.5 | 50.3 | 28.6 | 20.4* | 26.4* | 53.3 | 44.1* |
| 3 կամ ավելի երեխաներ | 17.0 | 48.8 | 33.8 | 31.2* | 39.5* | 64.0 | 61.6* |
| Քաղաքային | 13.9 | 47.1* | 27.8 | 18.9 | 22.3* | 30.5* | 45.7 |
| Գյուղական | 9.4 | 53.7* | 32.4 | 28.2 | 38.6* | 88.7* | 51.1 |

*Աստղանիշը ցույց է տալիս, որ երկու կատեգորիաների տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է 95% մակարդակով:

Պատկեր 44. Դրսևորումների/Չափումների համընկնում,15-17տ. երեխաներ



**Պատկեր 45. Աղքատության երեք դրսևորումների համընկնումը, 15-17տ. երեխաներ**




**Ոչ խոցելի որևէ չափման մեջ - 13.2%**

է ելնելով ցանկացած տեղից (դպրոց, գրադարան, բջջային հեռախոս) և ոչ թե միայն տնից համացանցի հասանելիությամբ: Երեխաների միայն 12 տոկոսն է, որ կարծես թե դուրս է մնում կրթության, զբաղվածության կամ ուսուցման համակարգերից:

Գյուղական բնակավայրերում տարիքային այս խմբերի երեխաները նույնպես ընդհանուր առմամբ ավելի խոցելի են ցանկացած ցուցանիշի գծով (Պատկեր 43): Միակ բացառությունը կրթությունը կամ վերապատրաստումն է, ուր գյուղական բնակավայրերի երեխաների խոցելիությունը փոքր-ինչ ավելի պակաս է: Ըստ բնակավայրի տարբերություններն ավելի նկատելի են SS մակարդակի խոցելիության առումով, այդ թվում՝ բնակարանային պայմանների, կոմունալ ծառայությունների և տեղեկատվության առումով, մինչդեռ անհատական մակարդակում խոցելիության տարբերությունը չափավոր է:

**Պատկեր 46. Թվաքանակն ըստ չափումների թվի, 15-17տ. երեխաներ**



Աղյուսակ 11. Խոցելիության թվաքանակը, 15-17 տարեկան երեխաներ

| | H | | | A | | | M0 | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդ. | Քաղաք. | Գյուղ. | Ընդ. | Քաղաք. | Գյուղ. | Ընդ. | Քաղաք. | Գյուղ. |
| Խոցելի 1+ | 92.2 | 87.6 | 98.2 | 38.4 | 33.6 | 43.9 | 0.35 | 0.29 | 0.43 |
| Խոցելի 2+ | 72.3 | 61.7 | 86.2 | 45.0 | 41.7 | 48.1 | 0.33 | 0.26 | 0.41 |
| Խոցելի 3+ | 46.5 | 33.4 | 63.5 | 54.1 | 52.8 | 55.0 | 0.25 | 0.18 | 0.35 |
| Խոցելի 4+ | 24.5 | 14.9 | 37.2 | 64.2 | 65.3 | 63.7 | 0.16 | 0.10 | 0.24 |
| Խոցելի 5+ | 9.0 | 6.2 | 12.5 | 76.5 | 76.6 | 76.4 | 0.07 | 0.05 | 0.10 |
| Խոցելի 6+ | 2.8 | 1.7 | 4.4 | 87.4 | 91.0 | 85.7 | 0.02 | 0.02 | 0.04 |

H: Թվաքանակ (խոցելիներ %), A: միջին ինտենսիվություն; M0: ճշգրտված թվաքանակի հարաբերակցություն

Պատկեր 47. 2+ դրսևորումներում/չափումներում կարիքավոր լինելու հավանականությունը, 15-17տ. երեխաներ



**Պատկեր 48. Խոցելիությունն ըստ աղքատության կարգավիճակի**




Իրականում, գյուղական բնակավայրերի երեխաները զգալիորեն ավելի խոցելի են ժամանցի, տեղեկատվության և կոմունալ ծառայությունների առումով, բայց ոչ աղքատության մնացած չորս դրսևորումներում (Աղյուսակ 10): Աղջիկներն ավելի խոցելի են տեղեկատվության տեսանկյունից, իսկ կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններում երեխաների բնակարային պայմանների գծով խոցելիությունն ավելի հավանական է: Երբ տնային տնտեսության գլխավորն աշխատում է, կրթության գծով երեխաների խոցելիությունը պակաս հավանական է: Սակայն սա միակ կարևոր տարբերությունը չէ: Ավելի շատ քույրեր և եղբայրներ ունեցող երեխաները ավելի շատ խոցելի են հագուստի, տեղեկատվոդթյան և բնակարային պայմանների գծով, իսկ այս տարբերությունները վիճակագրորեն նշանակալի են վստահության 95 տոկոսի միջակայքում:

Տարիքային այս խմբում ևս համընկման աստիճանը բավականին բարձր է: Չնայած նրան, որ աղքատության բոլոր յոթ դրսևորումներում միաժամանակ խոցելի երեխաների տոկոսը շատ ցածր է (0.3 տոկոս), յուրաքանչյուր առանձին դրսևորման մեջ խոցելի երեխաների մեծամասնությունը խոցելի է 1-4 լրացուցիչ դրսևորման ուղղությամբ (Պատկեր 41):

Համընկնման ամենաբարձր աստիճանով աղքատության դրսևորումներն են ժամանցը, կոմունալ ծառայությունները և բնակարանային պայմանները: Վեց երեխաներից մոտ մեկը միաժամանակ խոցելի է երեք ուղղությամբ, իսկ երեքից մեկը՝ առնվազն երկու դրսևորման համակցությամբ: Երեխաների միայն տասներեք տոկոսն է, որ խոցելի չէ աղքատության այս երեք դրսևորումներում:

15-17 տարեկան երեխաների մեծամասնությունը խոցելի է աղքատության 2 դրսևորումներում (26 տոկոս), իսկ մեկ հինգերորդը՝ առնվազն մեկում (Պատկեր 46): Գյուղական բնակավայրերի երեխաներն ավելի խոցելի են, քանի որ բաշխումը թեքված է աջ և այդ երեխաների գրեթե զրոյական տոկոսն է, որ աղքատության որևէ դրսևորման մեջ խոցելի չէ: Քաղաքային բնակավայրերում ապրող երեխաների իրավիճակն ավելի նպաստավոր է, քանի որ տասից ավելի քան մեկ երեխան որևէ ուղղությամբ խոցելի չէ:

Տարանջատման յուրաքանչյուր կետում մշտապես առկա է քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև տարբերությունը: Գյուղական բնակավայրերում ապրող երեխաները միշտ ավելի խոցելի են, իսկ միջինում ավելի խոցելի են, քան քաղաքային բնակավայրերում ապրող երեխաները (Աղյուսակ 11): Աղքատության երկու և ավելի դրսևորումների տարանջատման կետում խոցելի է քաղաքային բնակավայրերի երեխաների 62 տոկոսը, իսկ գյուղական բնակավայրերում՝ 86 տոկոսը: Միևնույն ժամանակ, քաղաքային բնակավայրերում ապրող երեխաները 42 տոկոսով խոցելի են աղքատության միջինում բոլոր յոթ դրսևորումների ուղղությամբ (մասնավորապես 2.9 դրսևորման), մինչդեռ գյուղական բնակավայրերի երեխաները խոցելի են 3-4 դրսևորման ուղղությամբ (7-ի 48 տոկոսը): Արդյունքում քաղաքային բնակավայրերի երեխաների ճշգրտված թվաքանակը 0.26 է, իսկ գյուղական բնակավայրերինը՝ 0.41:

Աղքատության երկու և ավելի դրսևորումներում խոցելի լինելու հավանականության վրա ազդող գործոնների շարքում դեռևս կարևոր դերակատարում ունի գյուղական բնակավայրերում ապրելու գործոնը, որը 13 տոկոսային կետով բարձրացնում է խոցելի լինելու

Պատկեր 50. Խոցելիություն և սպառում 15-17 տ. երեխաներ




հավանականությունը: Միևնույն ժամանակ, եթե տնային տնտեսության գլխավորը աշխատում է, խոցելի լինելու հավանականությունը նվազում է 17 տոկոսային կետով: Տնային տնտեսության գլխավորի սեռի ազդեցությունը (այն դեպքում, երբ այն ունի համապատասխան մեծություն) վիճակագրորեն նշանակալի չէ:

Ավելի հավանական է, որ աղքատ երեխաները խոցելի են կրթության, սոցիալական փոխհարաբերությունների և տեղեկատվության ուղղություններով, մինչդեռ մնացած ուղղություններում տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ:

Աղքատության դրսևորումների և սպառման հարաբերությունն ավելի թույլ է, քան նախորդ տարիքային խմբի դեպքում: Չնայած նրան, որ կորը սպառման ցածր մակարդակներում դեռևս թեք է, այն բավականին հանկարծակի ուղղվում է: Ամենաթեք կորերը բնակարանայինն ու տեղեկատվականն են: Պետք է նաև նշել, որ ավելի բարձր տարիքի երեխաների դեպքում գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև տարբերությունը, կարծես թե, զգալիորեն թույլ է՝ բացառությամբ կոմունալ ծառայությունների:

Զրկանքների թվի և սպառման միջև փոխադարձ կապը նույնն է, ինչ ցածր տարիքի երեխաների տարիքային խմբի դեպքում: Այդուհանդերձ, գյուղական և քաղաքային կորերը թեքևակիորեն թեք են, հատկապես սպառման ավելի ցածր մակարդակում: Սա ցույց է տալիս այն փաստը, որ հատկապես դեռահասների դեպքում, սպառման աճը՝ ամենայն հավանականությամբ, զգալիորեն չի նվազեցնում խոցելիությունը:

Պատկեր 51. Խոցելիության (2+) և աղքատության համընկնումը,-15-17տ երեխաներ




Ոչ աղքատ, ոչ խոցելի (2+): 22.2 %

Պատկեր 49. Սպառում և խոցելիության դրսևորումներ/չափումներ 15-17 տ. երեխաներ







Եվ վերջում, դիտարկենք տարիքային այս խմբում խոցելիության և աղքատության համընկնումը: Չորս երեխաներից մեկից էլ քիչն է, որ ոչ աղքատ է, ոչ էլ խոցելի աղքատության երկու և ավելի դրսևորումներում: Միևնույն ժամանակ 28 տոկոսը թե՛ աղքատ է, և թե՛ խոցելի: Դրամապես աղքատ տնային տնտեսություններում ապրող ոչ խոցելի երեխաների խումբը հարաբերականորեն փոքր է (վեց տոկոս), սակայն դեռահասների 44 տոկոսը խոցելի է աղքատության առնվազն երկու դրսևորումներում՝ առանց աղքատ լինելու:


© UNICEF/Armenia2016/Pirozzi

# 7 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն զեկույցը գնահատում է Հայաստանում մանկական աղքատության չափերը՝ ըստ Հայաստանում պաշտոնապես սահմանված չափորոշիչների: Մանկական բազմաչափ աղքատությունը սահմանվում է օգտագործելով բազմակի և համընկնող խոցելիության մեթոդաբանությունը, որը մշակվել և կիրառվել է ըստ հայաստանյան համատեքստի: Օգտագործելով 2013 և 2014թթ. Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալները՝ այս զեկույցը գնահատում է մանկական բազմաչափ աղքատության և դրամական աղքատության միջև համընկնումը՝ ըստ աղքատության ազգային շեմի:

Հայաստանում երեխաների 64 տոկոսն ապրում է բազմաչափ աղքատության պայմաններում, իսկ երեխաների 37 տոկոսը դրամապես աղքատ է: Երեք երեխաներից գրեթե մեկն աղքատ  է և խոցելի: Երեխաների 28 տոկոսը խոցելի է (աղքատության 2  և ավելի դրսևորումներում) և ապրում է դրամապես աղքատ տնային տնտեսությունում: Այս երեխաներն ամենախոցելին են և պետք է առաջնահերթ տեղ գրավեն սոցիալական քաղաքականության մեջ: Միաժամանակ, երեխաների 36 տոկոսը խոցելի է, սակայն չի ապրում աղքատ տնային տնտեսությունում: Խոցելիությունը վերացնելու համար այս երեխաները անմիջական միջամտության կարիք ունեն: Նրանք կարող են դուրս մնալ այն  քաղաքականությունների կիզակետից, որոնք հիմնվում են միայն  դրամական չափմամբ թիրախավորման վրա:

Խոցելիության առումով  առկա են սուր տարբերություններ քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև՝ մասնավորապես կոմունալ ծառայությունների առումով: Գյուղական բնակավայրերում ապրող երեխաների 87 տոկոսը խոցելի է այս ուղղությամբ՝ ջրամատակարարման և ջեռուցման անբավարար ծառայությունների համակցությամբ:  Երկրորդ կարևոր տարբերությունը տեղ է գտել տեղեկատվության մեջ: Գյուղական բնակավայրերում ապրող երեխաների 57 տոկոսի համար տեղեկատվությունն անհասանելի է, իսկ քաղաքային բնակավայրերում այն հասանելի չէ նույն երեք երեխայից  մեկի համար: Միևնույն ժամանակ, չկան ակնհայտ  սեռային տարբերություններ խոցելիության բաշխման և աղքատության կոնկրետ դրսևորումների առումով:




© UNICEF/Armenia2016/Pirozzi

# 8 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զեկույցում ներկայացված իրավիճակից ելնելով կարևորվում են երկու փոխլրացնող առաջարկություններ: Նախ և առաջ, սոցիալական ապահովության միջոցառումները պետք է բարելավվեն թե՛ իրենց ընդգրկման/ծավալների, թե՛ թիրախավորման տեսանկյունից, քանի որ առկա է երեխաների մի զգալի խումբ (մոտ17 տոկոս), որը թե՛ աղքատ է, թե՛ կարիքավոր: Այս երեխաները առանձնապես խոցելի լինելով, ապրում են ընտանեկան նպաստների համակարգում չգրանցված ընտանիքներում: Միևնույն ժամանակ, այն միջոցառումները, որոնք նպատակաուղղված են միայն ընտանիքների գնողունակությունը բարձրացնելուն, չեն կարող արդյունավետ կերպով լուծել երեխաների աղքատության խնդիրը, մասնավորապես այն երեխաների, ովքեր չեն ապրում դրամապես աղքատ ընտանիքներում: Գնողունակության աճի նկատմամբ խոցելիության արձագանքն այնքան էլ ուժեղ չէ:

Առավել խոցելի երեխաների խնդիրները լուծելու համար համապատասխան քաղաքականություններն իրենց ուշադրությունը պետք է կենտրոնացնեն ենթակառուցվածքների առումով քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև զգալի տարբերությունների վերացմանը, գյուղական բնակավայրերում սոցիալական ապահովության ցանցերի հզորացմանը: Անհրաժեշտ է բարձրացնել աղքատության նպաստների չափը և ընդլայնել թիրախային շահառուների ներառումը՝ աղքատ և խոցելի երեխաների ավելի լայն հատված ներառելու հավանականությունը բարձրացնելու նպատակով: Հարկ է նաև նշել, որ չափահասների զբաղվածության բարելավմանն ուղղված քաղաքականությունները ավելի մեծ հավանականությամբ կարող են դրական ազդեցություն ունենան խոցելիության, ինչպես նաև տնային տնտեսության ընդհանուր բարեկեցության վրա:

Աղքատության բազմաչափ դրսևորումները և դրամական չափումները պետք է դիտարկվեն ոչ թե որպես մրցակցող, այլ փոխլրացնող գործիքներ: Դրանք երկուսն էլ չափազանց կարևոր են մանկական աղքատության խնդիրներն ամբողջականորեն լուծելու համար՝ երեխայից պահելովվերլուծության կենտրոնում: Առավել խոցելի երեխաներին առաջնահերթություն տալու համար համապատասխան քաղաքականությունները պետք է կենտրոնանան այս երկու չափումների փոխգործակցության արդյունքում ստացված իրավիճակի բարդության վրա:

# ՀՂՈՒՄՆԵՐ

Ալկիր, Ս. և Ֆոսթեր, Ջ. 2011թ. «Հաշվում և բազմաչափ աղքատության չափում», Հանրային տնտեսագիտության ամսագիր (Alkire, S., & Foster, J. (2011). Counting and multidimensional poverty measurement. Journal of Public Economics), 95(7), 476–487.

Բրուքս-Գանն, Ջ և Դանքեն,Գ.Ջ, 1997թ. «Աղքատության ազդեցությունն երեխաների վրա», Երեխաների ապագան( Brooks-Gunn, J., and Duncan, G. J. (1997). “The effects of poverty on children.” The future of children) 55–71.

Դե Նյոբուրգ, Ս., Չեյ, Ջ., դե Միլիանո, Մ., Պլավգո,Ի. և Վեյ,Զ. (2012) «Բազմակի և համընկնող խոցելիության վերլուծության (MODA) քայլ առ քայլ ուղեցույց», ՅՈՒՆԻՍԵՖԻ Հետազոտությունների գրասենյակի աշխատանքային փաստաթուղթ ( de Neubourg, C., Chai, J., de Milliano, M., Plavgo, I., & Wei, Z. (2012). Step-by-step guidelines to the multiple overlapping deprivation analysis (MODA). UNICEF Office of Research Working Paper ) ԱՓ/WP-2012-10.

Դե Նյոբուրգ, Ս., դե Միլիանո, Մ. և Պլավգո,Ի. «Չափումներում մոլորված՝ բազմաչափ աղքատության ուսումնասիրության առաջընթացի ամրապնդում» ՅՈՒՆԻՍԵՖԻ Հետազոտությունների գրասենյակի աշխատանքային փաստաթուղթ (de Neubourg, C., de Milliano, M., & Plavgo, I. (2014). Lost (in) dimensions: Consolidating progress in multidimensional poverty research. UNCIEF Office of Research Working Paper)ԱՓ/WP 2014-04.

Գորդոն,Դ., Նենդի, Ս., Պանտազիս, Ս., Պեմբերտոն,Ս., Թաունսենդ,Պ. (2003թ., «Աղքատության բաշխումը զարգացող աշխարհում», ՅՈՒՆԻՍԵՖ-ին ուղղված զեկույց , Աղքատության վերաբերյալ հետազոտությունների միջազգային կենտրոն, Բրիստոլ (Gordon, D. Nandy, S., Pantazis, C., Pemberton, S., Townsend, P. (2003). ’The distribution of child poverty in the developing world’, Report to UNICEF. Centre for International Poverty Research, Bristol)

ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան 2014թ. «Հայաստանում երեխաներ իրավունքների իրադրությունը –Ակնարկ 2016-2020 թթ. Զարգացման աջակցության ծրագրի համար» (UNICEF Armenia (2014) “Situation of child rights in Armenia Overview for the 2016-2020 Country Program development”)

# ՀԱՎԵԼՎԱԾ Ա.

## Աղքատության դրսևորումների և ցուցանիշների ցանկ

| Աղքատության դրսևորում | Ցուցանիշ | Տարիքային խմբեր | | |
|---|---|---|---|---|
| | | 0-5 տարեկան | 6-14 տարեկան | 15-17 տարեկան |
| Սնուցում | Բացարձակապես կրծքով կերակրում առնվազն մինչև 6 ամսական | X | | |
| ՎՄՈՒԽ | Հաճախում նախադպրոցական հաստատություն (3-5 տարեկան) | X | | |
| Կրթություն | Տնային աշխատանքները կատարելու տեղ | | X | |
| | Դպրոցի համար անհրաժեշտ գրենական պիտույքներ | | X | |
| | Ընդգրկված չէ զբաղվածության կամ կրթության համակարգերում | | | X |
| Ժամանց | Դրսում խաղալու վայր | | X | X |
| | Ժամանացային միջոցներ (խաղալիքներ, հեծանիվ) | | X | |
| | Գրքեր | | | X |
| Սոցիալական փոխ-հարաբերություններ | Ընկերներ | | X | X |
| Հագուստ | Կոշիկներ | | X | X |
| Տեղեկատվու-թյուն | Տանը համակարգչի բացակայություն | X | X | |
| | Ինտերնետային կապի բացակայություն | X | X | |
| | Համակարգչից օգտվելու հնարավորության բացակայություն | | | X |
| | Համացանցից օգտվելու հնարավորության բացակայություն | | | X |
| Կոմունալ ծառայու-թյուններ | ջրամատակարարում (հասանելի է օրական 8 ժամից պակաս կամ ամսական 20 օրից պակաս) | X | X | X |
| | Ջեռուցում (չկա կամ օգտագործվում է փայտե վառելիք) | X | X | X |
| Բնակարա-նային պայմաններ | Գերբնակեցված | X | X | X |
| | Բնակարանային պայմանների հետ կապված խնդիրներ | X | X | X |

Նշումներ. (ա) Հարցը տրվել է հետահայաց, 0-5 տարեկան բոլոր երեխաների համար; (բ) Սահմանվում է միայն 3-5 տարեկան երեխաների համար, 0-3 տարեկան երեխաները համարվում են ոչ խոցելի:

# ՀԱՎԵԼՎԱԾ Բ.

## Մեթոդաբանություն

Հետևելով Ալկիրին և Ֆոսթերին (Alkire and Foster) (2011թ.), MODA մեթոդաբանությունը խոցելիությունն ուսումնասիրում է՝ օգտագործելով երեք հիմնական համաթվեր՝ թվաքանակի գործակից, խոցելիության միջին խորություն և ճշգրտված թվաքանակի գործակից: Յուրաքանչյուր ցուցանիշի և դրսևորման համար խոցելիության թվաքանակի գործակիցն իրենից ներկայացնում է մանկական բազիսային բնակչության մաս կազմող խոցելի երեխաների թիվը: Որպես FGT0 չափորոշիչ, այն ունի համաթվերի այս ընտանիքին հատուկ բնութագրիչն (Foster et al. 1984): Տվյալ դրսևորման խոցելիության թվաքանակի գործակիցը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$h_{j,r} = \frac{q_{j,r}}{n_r}$$

$$q_{j,r} = \sum_{i=1}^{n_r} y_j$$

**Որտեղ**

$hj,_r$ – Խոցելի երեխաների թվաքանակի գործակիցն է՝ $r$ բազիսային բնակչության $j$ աղքատության դրսևորման մեջ;

$q_j$ - $r$ բազիսային բնակչության $j$ աղքատության դրսևորման մեջ խոցելի երեխաների թիվն է;

$n_r$ - $r$ բազիսային բնակչության մեջ երեխաների թիվն է,

$y_j$ - $i$ երեխայի $j$ աղքատության դրսևորման մեջ խոցելիության կարգավիճակն է, ուր $y_j = 1$ եթե $x_j < Z_j$ (կարիքավորություն) և $y_j = 0$ եթե $x_j \geq Z_j$ (խոցելիություն չկա);

$x_j$ - $i$ երեխայի համար $j$ աղքատության դրսևորման արժեքն է,

$Z_j$ - $j$ աղքատության դրսևորման շեմը.

Հաշվելով յուրաքանչյուր երեխայի զրկանքների թիվը՝ կարող ենք հաշվարկել տարանջատման յուրաքանչյուր կետի համար աղքատության/աղքատ երեխաների թվաքանակը: Բազմաչափ խոցելիության միջին ինտենսիվությունը A բազմաչափ խոցելիություն ունեցող երեխաների խոցելիության ընդգրկումն է: Այն խոցելի համարվող երեխաների մոտ առկա բոլոր զրկանքների հանրագումարն է, որպես առնվազն K դրսևորումներում խոցելի երեխաներիհնարավոր բոլոր զրկանքների ընդհանուր գումար:

Խոցելիության միջին խորությունն օգտագործում է հետևյալ բանաձևը

$$A = \frac{\sum_1^{q_K} c_K}{q_K \times d}$$

**Որտեղ՝**

$A$ - բազմաչափ խոցելիության միջին ինտենսիվությունն է՝ համաձայն $a$ տարիքային խմբի համար $K$ տարանջատման կետի,

$q_K$- $a$ տարիքային խմբում առնվազն K զրկանքներ ունեցող երեխաների թիվն է

$d$ - համապատասխան $a$ տարիքային խմբի շրջանակներում մեկ երեխայի հաշվով զրկանքների ընդհանուր թիվն է,

$c_K$ - $i$ բազմաչափ խոցելիությոն ունեցող յուրաքանչյուր երեխայի կրած զրկանքների հանրագումարը, ուր $c_K = D_i{}^*y_K$

Վերջապես, M0 ճշգրտված թվաքանակի գործակիցը բաղկացած է մանկական բազմաչափ խոցելիության թվաքանակի գործակցից և խոցելիության միջին ինտենսիվությունից: Մանկական բազմաչափ խոցելիության թվաքանակի գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M_0 = H * A = \frac{\sum_1^{q_K} c_K}{n_a * d}$$

**Որտեղ՝**

$M0$ - $a$ տարիքային խմբում առնվազն $K$ զրկանքներ ունեցող երեխաների շրջանում մանկական խոցելիության ճշգրտված թվաքանակի գործակիցն է

$c_K$ - $i$ բազմաչափ խոցելիություն ունեցող յուրաքանչյուր երեխայի զրկանքների թիվը, որտեղ $c_K = D_i{}^*y_K$

# ՀԱՎԵԼՎԱԾ Գ.

## Բազմաչափ ռեգրեսիայի արդյունքներ

**Աղյուսակ Գ1: Յուրաքանչյուր չափման համար սահմանային /մարգինալ/ազդեցությունը. 0-5 տարեկան երեխաներ**

| ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐ | Սնուցում | ՎՄՏԿԽ | Տեղեկատվություն | Կոմ. Ծառայություններ | Բնակարանային պայմաններ |
|---|---|---|---|---|---|
| 1,000 AMD | 0.000 | **0.000** | **-0.005** | **-0.002** | **-0.003** |
| | (0.63) | (-1.92) | (-12.16) | (-5.85) | (-7.59) |
| Տարիք | **-0.217** | 3.534 | 0.023 | 0.006 | 0.010 |
| | (-10.75) | (0.05) | (1.00) | (0.32) | (0.42) |
| ՏՏ գլխավորի տարիք | 0.005 | 0.004 | -0.006 | 0.005 | -0.001 |
| | (1.07) | (1.30) | (-1.20) | (1.08) | (-0.20) |
| Արական | **-0.040** | 0.004 | **0.000** | **0.031** | **-0.041** |
| | (-2.32) | (0.35) | (-1.92) | (1.97) | (-2.24) |
| ՏՏ կին գլխավոր | 0.050 | -0.016 | 3.534 | -0.044 | 0.036 |
| | (1.64) | (-0.79) | (0.05) | (-1.58) | (1.11) |
| ՏՏ գլխավոր ունի ընդհանուր կրթություն | **-0.059** | 0.011 | 0.004 | 0.020 | -0.008 |
| | (-1.70) | (0.51) | (1.30) | (0.65) | (-0.21) |
| ՏՏ գլխավորն ունի միջն. և ավելի բարձր կրթություն | **-0.070** | -0.017 | 0.004 | **-0.066** | **-0.065** |
| | (-1.99) | (-0.78) | (0.35) | (-2.08) | (-1.75) |
| ՏՏ գլխավորն աշխատող է | **-0.046** | **-0.075** | -0.016 | 0.010 | -0.016 |
| | (-1.68) | (-4.23) | (-0.79) | (0.41) | (-0.55) |
| ՏՏ գլխավորն աշխատում է իր հաշվին գյուղատնտեսության ոլորտում | -0.046 | 0.003 | 0.011 | **0.264** | **-0.131** |
| | (-1.07) | (0.09) | (0.51) | (5.32) | (-2.81) |
| ՏՏ գլխավորը զբաղվում է սեփական գործով (ոչ գյուղատնտեսական) | -0.080 | **-0.152** | -0.017 | -0.054 | -0.033 |
| | (-0.96) | (-3.11) | (-0.78) | (-0.65) | (-0.34) |
| ՏՏ գլխավորն ամուսնացած է/բնակվում է համատեղ | -0.017 | -0.006 | **-0.075** | 0.036 | **0.046*** |
| | (-0.65) | (-0.36) | (-4.23) | (1.46) | (1.65) |
| Գյուղական | **-0.050** | **0.099** | 0.003 | **0.440** | **-0.054** |
| | (-2.58) | (8.07) | (0.09) | (37.94) | (-2.60) |
| 0-5տ երեխաների թիվը | **0.030** | **-0.016** | -0.152 | **0.017** | **0.113** |
| | (2.21) | (-1.70) | (-3.11) | (1.37) | (7.43) |
| 6-14 տ երեխաների թիվը | -0.011 | **0.024** | -0.006 | **0.027** | **0.121** |
| | (-0.70) | (2.34) | (-0.36) | (1.98) | (7.24) |
| 15-17 տ երեխաների թիվը | -0.037 | 0.019 | **0.099** | -0.046 | **0.083** |
| | (-0.96) | (0.74) | (8.07) | (-1.36) | (2.00) |
| 18-25տ չափահասների թիվը | 0.011 | -0.007 | **-0.016** | **-0.021** | **0.066** |
| | (0.90) | (-0.71) | (-1.70) | (-1.85) | (4.79) |
| 26-35տ չափահասների թիվը | 0.001 | **-0.017** | **0.024** | -0.018 | **0.068** |
| | (0.11) | (-2.13) | (2.34) | (-1.59) | (4.98) |
| 36-50 տ չափահասների թիվը | -0.012 | -0.014 | 0.019 | -0.024 | **0.062** |
| | (-0.73) | (-1.22) | (0.74) | (-1.55) | (3.38) |
| 51-65 տ չափահասների թիվը | 0.005 | **-0.038** | -0.007 | 0.002 | **0.038** |
| | (0.26) | (-2.96) | (-0.71) | (0.13) | (1.86) |
| 65տ-ից բարձր չափահասների թիվը | **0.052** | -0.027 | **-0.017** | -0.013 | **0.053** |
| | (1.89) | (-1.39) | (-2.13) | (-0.50) | (1.78) |
| *Դիտողություններ* | *2,617* | *2,617* | *2,617* | *2,617* | *2,617* |

z-վիճակագրական տվյալները փակագծերում են, թավ <0.1, Թավ և ընդգծված < 0.01

**Աղյուսակ Գ2-Յուրաքանչյուր չափման համար սահմանային /մարգինալ/ ազդեցությունը - 6-14տ. երեխաներ**

| ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐ | Կրթ. | Ժամանց | Սնդ. | Հագուստ | Տեղեկ. | Կոմ. ծառ. | Բնակարան. պայմաններ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1,000 ՀՀԴ | **-0.002** | **-0.004** | **-0.003** | **-0.003** | **-0.006** | **-0.003** | **-0.003** |
| | (-4.68) | (-7.81) | (-5.98) | (-7.21) | (-11.54) | (-8.07) | (-6.30) |
| Տարիք | **-0.114** | -0.012 | **-0.097** | **-0.093** | 0.005 | 0.026 | -0.030 |
| | (-2.97) | (-0.30) | (-2.37) | (-2.94) | (0.14) | (0.77) | (-0.74) |
| ՏՏ գլխավորի տարիք | -0.015 | -0.012 | 0.010 | 0.014 | **0.019** | **0.024** | -0.007 |
| | (-1.44) | (-1.12) | (0.93) | (1.59) | (1.90) | (2.58) | (-0.66) |
| Արական | -0.007 | -0.030 | -0.032 | -0.001 | 0.000 | -0.005 | -0.022 |
| | (-0.34) | (-1.31) | (-1.38) | (-0.03) | (0.02) | (-0.26) | (-0.98) |
| ՏՏ կին գլխավոր | **0.126** | **0.065** | -0.006 | 0.029 | 0.003 | -0.013 | **0.115** |
| | (3.53) | (1.68) | (-0.16) | (0.98) | (0.10) | (-0.41) | (3.07) |
| ՏՏ գլխավոր ունի ընդհանուր կրթություն | **0.054** | 0.002 | **0.066** | **0.08** | **0.062** | 0.028 | 0.024 |
| | (1.67) | (0.05) | (1.94) | (2.82) | (1.99) | (0.98) | (0.72) |
| ՏՏ գլխավորն ունի միջն. և ավելի բարձր կրթություն | 0.035 | -0.045 | **0.07** | -0.034 | 0.028 | 0.018 | -0.007 |
| | (0.96) | (-1.16) | (1.83) | (-1.19) | (0.81) | (0.57) | (-0.19) |
| ՏՏ գլխավորն աշխատող է | **-0.055** | -0.004 | **-0.105** | **-0.047** | **-0.093** | 0.039 | -0.041 |
| | (-1.81) | (-0.13) | (-3.32) | (-1.81) | (-3.16) | (1.49) | (-1.32) |
| ՏՏ գլխավորն աշխատում է իր հաշվին գյուղատնտեսության ոլորտում | **-0.093** | **-0.119** | 0.035 | **-0.07** | -0.023 | **0.091** | **-0.087** |
| | (-2.58) | (-3.24) | (0.94) | (-2.52) | (-0.68) | (2.64) | (-2.45) |
| ՏՏ գլխավորը զբաղվում է սեփական գործով (ոչ գյուղատնտեսական) | **-0.176** | **-0.08** | **-0.12** | **-0.094** | **-0.127** | -0.007 | -0.038 |
| | (-4.16) | (-1.66) | (-2.51) | (-2.62) | (-2.92) | (-0.16) | (-0.81) |
| ՏՏ գլխավորն ամուսնացած է/բնակվում է համատեղ | 0.007 | **0.072** | -0.033 | **0.079** | **0.065** | 0.006 | -0.010 |
| | (0.22) | (2.06) | (-0.96) | (2.91) | (2.03) | (0.20) | (-0.29) |
| Գյուղական | **-0.11** | 0.038 | 0.022 | **0.104** | **0.242** | **0.417** | **0.076** |
| | (-4.01) | (1.31) | (0.75) | (4.70) | (9.84) | (21.90) | (2.75) |
| 0-5տ երեխաների թիվը | **0.038** | **0.064** | 0.005 | 0.023 | **0.063** | **0.049** | **0.147** |
| | (1.97) | (3.07) | (0.25) | (1.49) | (3.44) | (2.82) | (7.06) |
| 6-14 տ երեխաների թիվը | **0.095** | 0.019 | **0.041** | **0.045** | **0.046** | **0.073** | **0.093** |
| | (5.39) | (1.01) | (2.15) | (3.17) | (2.63) | (4.35) | (4.95) |
| 15-17 տ երեխաների թիվը | **0.074** | 0.042 | -0.012 | **0.053** | -0.034 | 0.037 | **0.114** |
| | (2.40) | (1.26) | (-0.37) | (2.21) | (-1.13) | (1.30) | (3.56) |
| 18-25տ չափահասների թիվը | **0.047** | -0.023 | -0.022 | -0.027 | -0.019 | 0.008 | **0.142** |
| | (1.99) | (-0.92) | (-0.86) | (-1.37) | (-0.85) | (0.38) | (5.59) |
| 26-35տ չափահասների թիվը | **0.065** | -0.032 | 0.006 | 0.016 | **-0.098** | -0.009 | 0.029 |
| | (3.22) | (-1.49) | (0.30) | (0.97) | (-5.21) | (-0.53) | (1.42) |
| 36-50 տ չափահասների թիվը | **0.067** | 0.024 | 0.024 | 0.019 | **-0.102** | -0.019 | 0.014 |
| | (3.00) | (1.03) | (1.04) | (1.07) | (-4.84) | (-0.97) | (0.60) |
| 51-65 տ չափահասների թիվը | 0.020 | **0.049** | **-0.083** | -0.007 | **-0.103** | -0.035 | 0.038 |
| | (0.81) | (1.88) | (-3.22) | (-0.33) | (-4.32) | (-1.56) | (1.48) |
| 65տ-ից բարձր չափահասների թիվը | 0.030 | **0.085** | **-0.089** | **0.054** | -0.035 | 0.021 | **0.062** |
| | (0.81) | (2.18) | (-2.30) | (1.85) | (-0.99) | (0.65) | (1.67) |
| *Դիտողություններ* | *1,752* | *1,752* | *1,752* | *1,752* | *1,752* | *1,752* | *1,752* |

z-վիճակագրական տվյալները փակագծերում են, **թավ** <0.1, **Թավ և ընդգծված** < 0.01

| Աղյուսակ Գ3- Յուրաքանչյուր չափման համար մարգինալ ազդեցությունը - 15-17 տ. երեխաներ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐ** | **Կրթ.** | **Ժամանց** | **Սնդ.** | **Հագուստ** | **Տեղեկ.** | **Կոմ. ծառ.** | **Բնակարան. պայմաններ** |
| 1,000 ՀՀԴ | **-0.002** | **-0.001** | **-0.002** | **-0.001** | **-0.003** | **-0.003** | **-0.002** |
| | (-3.12) | (-1.67) | (-2.77) | (-1.94) | (-3.76) | (-4.00) | (-2.65) |
| Տարիք | 1.061 | 1.155 | **-3.288** | 1.694 | 0.248 | **-2.988** | 0.376 |
| | (1.07) | (0.76) | (-2.44) | (1.38) | (0.19) | (-2.52) | (0.27) |
| ՏՏ գլխավորի տարիք | -0.008 | 0.027 | 0.018 | 0.011 | 0.020 | **0.03** | **0.056** |
| | (-0.86) | (1.48) | (1.11) | (0.73) | (1.28) | (2.01) | (3.24) |
| Արական | 0.016 | 0.037 | -0.054 | 0.016 | **-0.083** | -0.020 | -0.021 |
| | (0.73) | (0.87) | (-1.48) | (0.46) | (-2.31) | (-0.60) | (-0.54) |
| ՏՏ կին գլխավոր | 0.000 | 0.012 | 0.014 | 0.023 | -0.046 | **0.08** | **0.178** |
| | (0.01) | (0.18) | (0.25) | (0.46) | (-0.83) | (1.65) | (3.06) |
| ՏՏ գլխավոր ունի ընդհանուր կրթություն | **-0.465** | **-0.131** | 0.079 | -0.089 | 0.007 | 0.043 | **-0.108** |
| | (-8.01) | (-2.00) | (1.54) | (-1.47) | (0.12) | (0.78) | (-1.69) |
| ՏՏ գլխավորն ունի միջն. և ավելի բարձր կրթություն | **-0.498** | **-0.155** | **0.225** | -0.012 | -0.092 | -0.056 | 0.057 |
| | (-8.41) | (-1.97) | (3.32) | (-0.16) | (-1.34) | (-0.88) | (0.76) |
| ՏՏ գլխավորն աշխատող է | -0.011 | -0.051 | **-0.128** | 0.005 | **-0.119** | **-0.127** | **-0.107** |
| | (-0.37) | (-0.89) | (-2.50) | (0.10) | (-2.41) | (-2.72) | (-1.98) |
| ՏՏ գլխավորն աշխատում է իր հաշվին գյուղատնտեսության ոլորտում | -0.019 | -0.000 | -0.080 | 0.057 | 0.066 | 0.046 | -0.089 |
| | (-0.57) | (-0.00) | (-1.33) | (1.02) | (1.08) | (0.82) | (-1.46) |
| ՏՏ գլխավորը զբաղվում է սեփական գործով (ոչ գյուղատնտեսական) | 0.015 | -0.015 | **-0.139** | -0.049 | 0.004 | 0.045 | -0.104 |
| | (0.31) | (-0.18) | (-1.99) | (-0.80) | (0.05) | (0.66) | (-1.29) |
| ՏՏ գլխավորն ամուսնացած է/բնակվում է համատեղ | -0.051 | 0.095 | 0.030 | 0.032 | 0.049 | -0.021 | 0.038 |
| | (-1.02) | (1.23) | (0.45) | (0.51) | (0.74) | (-0.34) | (0.52) |
| Գյուղական | -0.038 | -0.013 | 0.039 | 0.003 | 0.063 | **0.415** | **0.099** |
| | (-1.36) | (-0.27) | (0.87) | (0.07) | (1.45) | (13.63) | (2.10) |
| 0-5տ երեխաների թիվը | 0.009 | 0.029 | 0.030 | 0.015 | **0.166** | 0.021 | **0.222** |
| | (0.36) | (0.51) | (0.62) | (0.33) | (3.49) | (0.47) | (3.90) |
| 6-14 տ երեխաների թիվը | 0.011 | 0.037 | 0.033 | **0.12** | **0.053** | 0.001 | **0.088** |
| | (0.74) | (1.10) | (1.17) | (4.67) | (1.88) | (0.03) | (2.79) |
| 15-17 տ երեխաների թիվը | **0.062** | **-0.091** | **-0.089** | -0.021 | -0.009 | 0.039 | 0.225 |
| | (2.57) | (-1.78) | (-1.92) | (-0.52) | (-0.20) | (0.95) | (4.87) |
| 18-25տ չափահասների թիվը | 0.014 | 0.033 | **-0.074** | -0.014 | -0.015 | **-0.054** | **0.096** |
| | (0.84) | (0.97) | (-2.39) | (-0.52) | (-0.51) | (-1.93) | (3.00) |
| 26-35տ չափահասների թիվը | -0.005 | -0.041 | -0.010 | -0.024 | **-0.089** | **-0.096** | 0.017 |
| | (-0.21) | (-0.92) | (-0.27) | (-0.69) | (-2.31) | (-2.78) | (0.41) |
| 36-50 տ չափահասների թիվը | 0.023 | 0.017 | 0.010 | **-0.065** | **-0.132** | 0.003 | -0.020 |
| | (1.06) | (0.41) | (0.27) | (-1.96) | (-3.74) | (0.09) | (-0.51) |
| 51-65 տ չափահասների թիվը | 0.032 | -0.010 | -0.024 | 0.021 | **-0.081** | -0.042 | 0.019 |
| | (1.20) | (-0.21) | (-0.54) | (0.54) | (-1.87) | (-1.08) | (0.42) |
| 65տ-ից բարձր չափահասների թիվը | -0.014 | -0.004 | -0.004 | 0.030 | -0.023 | 0.011 | 0.049 |
| | (-0.42) | (-0.06) | (-0.08) | (0.60) | (-0.42) | (0.22) | (0.84) |
| *Դիտողություններ* | *562* | *562* | *562* | *562* | *562* | *562* | *562* |

z-վիճակագրական տվյալները փակագծերում են, **թավ** <0.1, **Թավ և ընդգծված** < 0.01

| Աղյուսակ Գ4-Մարգինալ ազդեցությունը խոցելիության վրա՝ ըստ տարիքային խմբի և ընդհանուրը | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Children 0-5 | | Children 6-14 | | Children 15-17 | | All children | |
| ՓՈՓՈԽԱ ԿԱՆՆԵՐ | Խոցելի 2+ | Զրկանքների թիվը | Խոցելի 2+ | Զրկանքների թիվը | Խոցելի 2+ | Զրկանքների թիվը | Խոցելի 2+ | Զրկանքների թիվը |
| 1,000 ՀՀԴ | **-0.003** | **-0.001** | **-0.003** | **-0.001** | **-0.003** | **-0.001** | **-0.004** | **-0.001** |
| | (-9.43) | (-5.22) | (-9.36) | (-6.52) | (-4.68) | (-3.55) | (-14.69) | (-10.02) |
| Տարիք | **-0.063** | **-0.024** | -0.034 | -0.022 | 1.450 | 0.040 | **0.041** | **0.010** |
| | (-3.01) | (-1.78) | (-1.07) | (-1.02) | (1.14) | (0.05) | (7.48) | (2.53) |
| ՏՏ գլխավորի տարիք | 0.004 | -0.001 | -0.009 | 0.004 | **0.028** | 0.011 | 0.002 | 0.002 |
| | (0.80) | (-0.31) | (-1.12) | (0.73) | (1.98) | (1.47) | (0.43) | (0.49) |
| Արական | -0.026 | -0.002 | -0.037 | -0.011 | 0.008 | -0.006 | -0.014 | -0.006 |
| | (-1.56) | (-0.15) | (-2.11) | (-0.96) | (0.24) | (-0.29) | (-1.17) | (-0.71) |
| ՏՏ կին գլխավոր | 0.006 | 0.005 | 0.025 | 0.025 | 0.082 | 0.025 | 0.015 | 0.018 |
| | (0.21) | (0.26) | (0.83) | (1.26) | (1.54) | (0.78) | (0.73) | (1.18) |
| ՏՏ գլխավոր ունի ընդհ. կրթություն | -0.000 | 0.024 | **0.068** | 0.012 | -0.000 | -0.008 | **0.077** | **0.034** |
| | (-0.01) | (1.13) | (2.68) | (0.68) | (-0.01) | (-0.24) | (4.23) | (2.51) |
| ՏՏ գլխավորն ունի միջն. և ավելի բարձր կրթություն | **-0.102** | -0.032 | **0.061** | 0.015 | -0.035 | -0.001 | 0.020 | -0.013 |
| | (-3.07) | (-1.40) | (2.27) | (0.84) | (-0.53) | (-0.03) | (1.03) | (-0.85) |
| ՏՏ գլխավորն աշխատող է | **-0.077** | **-0.050** | **-0.074** | -0.021 | **-0.171** | -0.033 | **-0.060** | -0.024 |
| | (-2.83) | (-2.76) | (-3.29) | (-1.47) | (-3.51) | (-1.25) | (-3.53) | (-2.09) |
| ՏՏ գլխավորն աշխատում է իր հաշվին գյուղատնտեսության ոլորտում | **0.024** | **0.050** | **-0.170** | -0.033 | -0.039 | -0.010 | **-0.072** | -0.008 |
| | (0.51) | (2.14) | (-4.26) | (-1.32) | (-0.57) | (-0.26) | (-2.84) | (-0.47) |
| ՏՏ գլխավորը զբաղվում է սեփական գործով (ոչ գյուղատնտեսական) | **-0.235** | -0.070 | -0.030 | -0.029 | 0.014 | -0.000 | 0.012 | -0.001 |
| | (-2.48) | (-1.08) | (-1.08) | (-1.25) | (0.28) | (-0.02) | (0.57) | (-0.08) |
| ՏՏ գլխավորն ամուսնացած է/ բնակվում է համատեղ | 0.016 | 0.004 | **0.050** | -0.005 | 0.014 | 0.025 | 0.019 | 0.005 |
| | (0.64) | (0.22) | (1.87) | (-0.29) | (0.21) | (0.69) | (1.05) | (0.40) |
| Գյուղական | **0.224** | **0.101** | **0.161** | **0.110** | **0.127** | **0.092** | **0.197** | **0.144** |
| | (12.44) | (6.72) | (7.13) | (5.65) | (3.08) | (3.08) | (12.82) | (10.42) |
| 0-5տ երեխաների թիվը | **0.059** | **0.017** | **0.071** | 0.013 | 0.074 | 0.031 | **0.026** | 0.007 |
| | (4.22) | (1.76) | (3.76) | (1.05) | (1.45) | (0.90) | (2.29) | (0.89) |
| 6-14 տ երեխաների թիվը | **0.029** | 0.009 | **0.069** | 0.026 | 0.037 | 0.003 | **0.083** | **0.024** |
| | (1.90) | (0.85) | (4.19) | (2.38) | (1.21) | (0.16) | (7.96) | (3.10) |
| 15-17 տ երեխաների թիվը | -0.025 | 0.045 | **0.046** | 0.007 | 0.067 | -0.006 | 0.010 | -0.003 |
| | (-0.68) | (1.31) | (1.75) | (0.43) | (1.47) | (-0.22) | (0.51) | (-0.20) |
| 18-25տ չափահասների թիվը | **-0.022** | -0.000 | 0.003 | 0.010 | 0.010 | -0.004 | 0.010 | 0.012 |
| | (-1.76) | (-0.03) | (0.16) | (0.73) | (0.36) | (-0.26) | (1.03) | (1.55) |
| 26-35տ չափահասների թիվը | -0.014 | 0.013 | 0.001 | -0.002 | -0.009 | 0.016 | 0.002 | 0.014 |
| | (-1.11) | (1.48) | (0.04) | (-0.16) | (-0.23) | (0.59) | (0.18) | (1.92) |
| 36-50 տ չափահասների թիվը | -0.003 | 0.030 | 0.013 | 0.003 | -0.023 | -0.005 | 0.005 | 0.019 |
| | (-0.15) | (2.51) | (0.72) | (0.27) | (-0.63) | (-0.23) | (0.38) | (2.12) |
| 51-65 տ չափահասների թիվը | -0.008 | -0.004 | 0.020 | 0.003 | -0.012 | -0.028 | -0.001 | 0.002 |
| | (-0.41) | (-0.36) | (1.02) | (0.24) | (-0.30) | (-1.14) | (-0.08) | (0.22) |
| 65տ-ից բարձր չափահասների թիվը | 0.016 | -0.021 | -0.000 | -0.010 | 0.011 | -0.029 | 0.003 | -0.017 |
| | (0.58) | (-1.14) | (-0.01) | (-0.52) | (0.20) | (-0.96) | (0.12) | **(-1.14)** |
| | | | | | | | 0.087 | 0.070 |
| *Դիտորդություններ* | *2,617* | *2,617* | *1,752* | *1,752* | *562* | *562* | *4,578* | *4,578* |

z-վիճակագրական տվյալները փակագծերում են, **թավ** <0.1, **Թավ և ընդգծված** < 0.01

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

**ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ**
www.unicef.am
www.facebook.com/unicefarmenia
www.twitter.com/unicefarmenia
www.instagram.com/unicef_armenia
www.youtube.com/unicefarmenian

Հրատարակվել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի կողմից
Պետրոս Ադամյան 14, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, 3-րդ հարկ
Երևան 0010, Հայաստան

+ (37410) 580 174
yerevan@unicef.org
www.unicef.am

© ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ
Երևան 2016


ՄԱՆԿԱԿԱՆ
ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
Բազմակի և համընկնող
խոցելիության
ազգային վերլուծություն
unicef
70 YEARS FOR EVERY CHILD


CHILD POVERTY
IN ARMENIA
National Multiple
Overlapping
Deprivation Analysis
NATIONAL
STATISTICAL
SERVICE OF RA
unicef
70 YEARS FOR EVERY CHILD


CHILD POVERTY
IN ARMENIA
National Multiple
Overlapping
Deprivation Analysis
NATIONAL
STATISTICAL
SERVICE OF RA
unicef
70 YEARS FOR EVERY CHILD


ՄԱՆԿԱԿԱՆ
ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
Բազմակի և համընկնող
խոցելիության
ազգային վերլուծություն
unicef
70 YEARS FOR EVERY CHILD